

ԹԵՐԵՉԸ ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՆ

# ԵՐԴԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

(Ի ն ք ն ա կ ե ն ս ա գ ռ ա կ ա ն ձ ե ռ ա գ ռ ե ռ ը)

ՄԱՍՆ Գ.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Աստի Ղազարեան*

#### 4. ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ ՈՒՍՄԱՆ ՄԵՉ

##### ԵՒ ՎԱՆԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ (1883–1886)

Կարմեղոսի խօսարանում – Ընթերցասիրությունը – Վերադարձ Ալանսոն – Յիսուսի հետ առաջին հանդիպումը Ամենասուրբ Հաղորդութեան միջոցով – Դրոշմը – Վարժարանի խղճալի կեանքը – Խղճահարությունները – Անձնական դասեր – Դասասեներակը – Լեոնիան – Մարիան մտնում է Կարմեղոս – Երկնային պատասխանը

96. Կարմեղոսի այս այցելութիւնները պատմելիս, յիշեցի դրանցից առաջինը, որ տեղի էր ունեցել Փօլինի այնտեղ մտնելուց մի քանի օր անց: Մոռացայ սրա շուրջ խօսել, բայց իր մէջ պարունակում է մի մանրամասնութիւն, որ չէի կամենայ մոռացութեան մատնել: Խօսարան գնալու օրուայ առաւօտեան, միայնակ նստած էի անկողնու վրայ, մտածում էի՝ թէ արդեօք ի՞նչ անուն էր տրուելու ինձ Կարմեղոսում: Գիտէի, որ կար արդէն մի քոյր Թերեզա Յիսուսի, եւ սակայն չէի կամենում, որ փոխուէր իմ Թերեզա գեղեցիկ անունը: Յանկարծ, մտքիս աչքերի առջեւ ուրուագծուեց Յիսուս Մանուկը, որին շատ էի սիրում, եւ ինքս ինձ ասացի. «Ա՛հ, ի՛նչ երջանիկ կը լինէի, եթէ անուանուէի ”Թերեզա Յիսուս Մանկան”»: Երազանքիս մասին խօսարանում ոչինչ չասացի, բայց Մայր Մարիամ Գոնձական, մինչ հարցնում էր մայրապետներին, թէ ի՞նչ անուն կարող էին ինձ տալ ապագայում, յանկարծ որոշեց կոչել ինձ այն նոյն անուամբ, որ փափաքում էի: Ուրախութիւնս անչափ էր, եւ մտքերի այդ երջանիկ զուգադիպումը Յիսուս Մանկան փափկանկատութիւններից մէկը թուաց ինձ:

97. Մոռացայ յիշել մանկութեանս մի քանի մանրամասներ նոյնպէս, չխօսեցի պատկերների ու ընթերցանութեան հանդէպ ունեցած սիրոյս մասին: Այնժամ դուք դեռ Կարմեղոսում չէիք: Եւ սակայն, Մայր իմ, պարտաւոր եմ գեղեցիկ պատկերներին (որ ցուցադրում էիք ինձ որպէս վարձատրութիւն) այն ամենաքաղցր ուրախութիւններն ու ամենախոր տպաւորութիւնները, որ մղեցին ինձ դէպի առաքինութիւնների գործադրումը: Դրանք դիտելով՝ մոռանում էի ժամերը: Օրինակ, «Աստուածային Բանտարկեալի խոնարհ ծաղիկը» ինձ այնքան բան էր ասում, որ մի տեսակ յափշտակութեան մէջ էի ընկնում ու մնում: Տեսնելով, որ ծաղկած փոքրիկ ճիւղի տակ գրուած էր Փօլին անունը, ուժգին կամեցայ, որ գրուէր նաեւ Թերեզա անունը: այդպիսի պահերին, անձս Յիսուսին էի նուիրում, Իր ծաղիկը լինելու համար:

98. Խաղալ չգիտէի, բայց կարգալ շատ էի սիրում. կեանքս ընթերցանութեամբ էի անցկացնելու: Բարեբախտաբար, ինձ առաջնորդելու համար մարմնեղէն հրեշտակներ ունէի, որոնք իմ համար այնպիսի գրքեր էին ընտրում, որոնք զբաղեցնելու հետ մէկտեղ նաեւ սնուցում էին սիրտս ու հոգիս: Սակայն շատ քիչ ժամանակ էի կարողանում տրամադրել ընթերցանութեանը եւ յաճախ այն մեծ գոհողութիւնների նիւթ էր դառնում, որովհետեւ երբեմն ստիպուած էի լինում ընդհատել ամենահետաքրքրական կէտում: Ընթերցանութեան այս հրապոյրը տեւեց մինչեւ Կարմեղոս մտնելս: Զեռքովս անցած գրքերի քանակը թերեւս անհնարին է ճշտել, եւ սակայն, Տէրը երբեք չթոյլատրեց ինձ կարգալ մի գիրք, որը կարող կը լինէր որեւէ կերպով վնասել ինձ: Ճիշտ է, որ որոշ ասպետական պատմուածքներ կարդալիս միշտ չէ՛ որ ըմբռնում էի, առաջին իսկ պահին, կեանքի իրական իմաստը. բայց շուտով Տէրն ինձ հասկացնում էր, որ ճշմարիտ փառքն այն է՝ որ տեւում է

յաւէտ, եւ որ նրան հասնելու համար պայման չէ աղմկարար գործեր կատարելը, այլ յատկապէս՝ առաքինութիւնների գործադրումը, այնպէս՝ որ ձախ ձեռքը չիմանայ, թէ ինչ է անում աջը<sup>1</sup> ... :

99. Այսպիսով, կարգալով Ֆրանսական հերոսուհիների հայրենասիրական քաջագործութիւնները, ի մասնաւորի՝ Սրբուհի Ժաննա դ'Արքի կենսագրութիւնը, մեծ փափաք էի զգում նմանուելու նրանց. թւում էր ինձ՝ թէ ներսումս ունէի այն նոյն կրակը, որ ոգեւորել էր նրանց, նոյն երկնային ներշնչանքը: Այնժամ Տիրոջից մի շնորհ ստացայ, որը միշտ համարել եմ ընդունած ամենամեծ պարգեւներիցս մէկը, որովհետեւ այդ տարիքում շատ լոյսեր չէի ստանում, ինչպէս այժմ, երբ դրանցով ողողուած եմ: Զգացի, որ ծնուել եմ փառքի համար, եւ մինչ դրան հասնելու միջոցներն էի փնտռում, Տէրն ինձ հասկացրեց այն՝ ինչ կը գրեմ այժմ: Ըմբռնեցի, որ իմ փառքը չպէտք է տեսանելի լինի մարդկային աչքերին, եւ որ պիտի կայանայ մի մեծ Սրբուհի դառնալու մէջ: Այս փափաքս կարող է յանդուգն թուալ, եթէ հաշուի առնենք՝ թէ որքան տկար էի ու անկատար, եւ թէ դեռեւս որքան թերի եմ այժմ, վանքում անցկացրած եօթը տարիներից յետոյ<sup>2</sup>. Եւ սակայն, միշտ էլ նոյն յանդուգն վստահութիւնն ունեմ դառնալու մի մեծ Սրբուհի, որովհետեւ յոյսս իմ արժանիքների վրայ չէ՝ որ դրել եմ, քանի որ չունեմ դրանցից եւ ոչ իսկ մի հատ, այլ յոյսս նրա վրայ է՝ որ ինքնին Առաքինութիւնն է, նոյն ինքն Սրբութիւնը: Նա, իմ տկար ջանքերով գոհանալով, կը բարձրացնի ինձ մինչեւ ինքը եւ, իր արժանիքներով ծածկելով, ինձ Սրբուհի կը դարձնի: Այն ժամանակ դեռ չգիտէի, որ Սրբուհի դառնալու համար հարկաւոր է շատ տառապել, բայց Աստուած այդ գաղտնիքը շուտով յայտնեց ինձ, ուղարկելով այն փորձութիւնները, որոնց մասին արդէն պատմեցի: Այժմ պատմութիւնս կը շարունակեմ այն կէտից, ուր այն թողել էի:

100. Առողջանալուցս երեք ամիս յետոյ, հայրիկը մի ճամփորդութիւն կազմակերպեց դէպի Ալանսոն<sup>3</sup>: Առաջին անգամն էր, որ վերադառնում էի ու կրկին անգամ տեսնում այն վայրերը, ուր անցել էին մանկութեանս տարիները. ուրախութիւնս վիթխարի էր, յատկապէս երբ հնարաւորութիւնն ունեցայ աղօթելու մայրիկի գերեզմանի առաջ եւ խնդրելու նրան, որ միշտ պաշտպանի ինձ:

Աստուած թոյլ տուեց ինձ ճանաչել աշխարհիկ հասարակութիւնն այն չափով միայն, որքան բաւական էր այն իրական կերպով արժէքաւորելու եւ նրանից հեռու մնալու համար: Թերեւս կարող եմ ասել, որ Ալանսոնում անցկացրած այդ օրերին էր, որ իմ առաջին մոլտքը կատարեցի աշխարհ: Ամէն բան գուարճութիւն էր, երջանկութիւն չորս բոլորս, ամէնուր ընդունւում էի սիրով, հոգաւատ խնամքի ենթարկուում, սքանչացման առարկայ դառնում: Մի խօսքով, այդ տասնհինգ օրերի ընթացքում կեանքս ծաղիկներով էր միայն ողողուած: Խոստովանում եմ, որ այդ կեանքը հրապուրում էր ինձ: Իմաստութեան գիրքն իրաւացի է, երբ ասում է, որ «ունայնութեան հմայքը որսում է չարից հեռու հոգիներին անգամ»<sup>4</sup>: Տասը տարեկան հասակում, սիրտը հեշտօրէն է շլանում, այս իսկ պատճառով մեծ շնորհ եմ

<sup>1</sup> Հմմտ. Մտթ 6, 3

<sup>2</sup> Սրբուհին այս տողերը գրում էր 1895ին, հետեւաբար՝ իսկապէս անցել էին եօթ տարիներ: Ուղղումներ կատարելու ժամանակ, սակայն, երբ ձեռագիրն այլեւս չպէտք է յանձնուէր մայր Ագնէս Յիսուսին, այլ մայր Մարիամ Գոնձակային, որը Մեծաւորուհի էր վերընտրուել 1896ին, «եօթ»ը սրբագրման է ենթարկուել եւ դարձել է «ութ»:

<sup>3</sup> 1883ի Օգոստոսին:

<sup>4</sup> Հմմտ. Իմ 4, 12

համարում Ալանսոնից հեռանալու բարեկամները, որ ունեինք այնտեղ, չափազանց աշխարհիկ էին, մեծ ճարպկութեամբ «կարողանում էին» իրար միացնել աշխարհի գուարճութիւններն ու Աստծոյ ծառայութիւնը: Բաւական չէին մտածում մահուան մասին, եւ սակայն, մահն արդէն այցելել է այդ անձանց մեծամասնութեանը, որոնց ճանաչում էի. երիտասարդներ, հարուստներ, երջանիկներ: Իմ համար հաճելի է մտովին վերադառնալ այն գեղազուարճ տեղերը, որոնցում նրանք ապրեցին, եւ հարցնել ինքս ինձ՝ թէ ո՞ր եւ նրանք այժմ, ի՞նչ մնաց իրենց այդ դղեակներից ու մարգագետիններից, որոնցում տեսայ նրանց կեանք վայելելը: Եւ տեսնում եմ, որ այս արեւի տակ ամէն ինչ ունայնութիւն է եւ քամու աշխատանք<sup>1</sup> ... , որ միակ բարիքը Աստծուն ամբողջ սրտով սիրելն է, եւ այստեղ՝ ներքեւում հոգով աղքատ լինելը:

101. Գուցէ Յիսուս ինձ տալիք իր առաջին այցելութիւնից առաջ կամենում էր ծանօթացնել ինձ աշխարհին, որպէսզի լիակատար ազատութեամբ կարողանայի ընտրել այն ճանապարհը, որով քայլելու էի իր հետ: Առաջին Հաղորդութեանս օրը սրտիս մէջ տպաւորուել է որպէս անամպ յիշատակ, թւում է ինձ՝ որ աւելի լաւ տրամադրուած չէի կարող լինել, եւ հոգուս վշտակրութիւնը նոյնպէս գրեթէ մի տարով հեռացուեց ինձնից: Յիսուս կամենում էր սնուցել ինձ մի այնպիսի կատարեալ ուրախութեամբ, որից աւելին այլեւս անհնարին լինէր գտնել արցունքների այս հովտում:

102. Յիշո՞ւմ էք, Մայր իմ, այն սքանչելի ձեռագիր գրքոյկը, որ տուցիք ինձ առաջին Հաղորդութիւնիցս երեք ամիս առաջ<sup>2</sup>: Ճիշտ այդ էջերն էին, որ օգնեցին ինձ պատրաստելու սիրտս նպատակայարմար ու արագ կերպով, որովհետեւ, թէեւ արդէն վաղուց ի վեր պատրաստուում էի այդ իրադարձութեանը, հարկաւոր էր այնուամենայնիւ մի նոր սլացք հաղորդել նրան, նոր ծաղիկներով զարդարել այն, որպէսզի այնտեղ Յիսուս հաճոյքով հանգստանար: Ամէն օր մեծաթիւ հոգեւոր հրահանգներ էի գործադրում, որոնք նոյնքան ծաղիկներ էին կազմում, եւ դե՛ռ աւելի բազմաթիւ «սիրոյ հառաչանքներ»<sup>3</sup> էի կատարում, որոնք դուք գրել էիք իմ փոքրիկ գրքոյկիս մէջ ամէն օրուայ համար եւ որոնք էլ հէնց կազմում էին իմ ծաղիկների բողբոջները:

Ամէն շաբաթ ձեզնից մի գեղեցիկ նամակ էի ստանում, որը հոգիս խոր մտածումներով էր լցնում եւ օգնում էր գործադրելու առաքինութիւնները. մխիթարութիւններ էին դրանք ձեր փոքրիկ դասեր սրտին, որի համար իրօք մեծ գոհողութիւն էր ընդունելը, որ առաջին Հաղորդութեանը չպէտք է պատրաստուէր ամէն երեկոյ ձեր ծնկներին նստած, Մայր իմ, ինչպէս պատրաստուել էր Սելինը:

<sup>1</sup> Հմմտ. Ժող 2, 11

<sup>2</sup> Այդ գրքոյկը հետագայում հրատարակուեց այս վերնագրով: Deux mois et neuf jours de préparation a ma Première Communion, Boumard Fils, 1909.

<sup>3</sup> Այս «սիրոյ հառաչանք»ները կամ «ներգործութիւն»ները կայանում են մի փոքրիկ նախադասութեան մէջ, այն է՝ «Յիսուս, սիրում եմ քեզ»: Իր վերջին յայտնութիւններից մէկի ժամանակ, ահա թէ ինչ խոստումներ է տալիս մեր Տէրը.

«Իւրաքանչիւր սիրոյ ներգործութիւնդ մնում է յաւիտեան: Քո իւրաքանչիւր "Յիսուս, սիրում եմ քեզ"ը ձգում է ինձ դէպի սրտիդ խորքերը: Իւրաքանչիւր սիրոյ ներգործութիւնդ փոխհատուցում է հազար անհաւատ խօսքերի փոխարէն: Իւրաքանչիւր սիրոյ ներգործութիւնդ մի հոգի է, որ փրկուում է: Որովհետեւ ծարաւն ունեմ քո սիրոյ, քո մի սիրոյ ներգործութեան համար անգամ կը ստեղծէի դրախտը: Սիրոյ ներգործութիւնը օգնում է քեզ առաւելագոյն չափով արժեւորելու այս երկրաւոր օրերի իւրաքանչիւր պահը, քանի որ զօրավիգ է քեզ՝ պահելու առաջին ու մեծագոյն պատուիրանը. "Սիրիր Աստծուն ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ մտքովդ, բոլոր ուժերովդ"»:

(Յիսուս՝ քոյր Քոնսուլատա Բեթոնէ մայրապետին, եւ նրա միջոցով՝ մեզ բոլորիս)

103. Մակայն կար Մարիան, որն իմ համար փոխարինում էր Փօլինին: Նստում էի նրա մօտ ու ծարաւով լսում իր խօսքերը, թւում էր՝ թէ նրա սիրտը, որն այնքա՛ն մեծ էր ու այնքա՛ն վեհանձն, բաբախում էր այլեւս իմ կրծքում: Ինչպէս քաջարի ռազմիկներն են ուսուցանում իրենց որդիներին զէնքերի արուեստը, այնպէս էլ Մարիան պատմում էր ինձ կեանքի ճակատամարտների մասին, եւ այն դափնեպսակի՝ որ վերապահուած է յաղթականներին միայն: Խօսում էր նաեւ յաւիտենական հարստութիւնների մասին, որոնք շատ հեշտութեամբ կարելի է ձեռքբերել ամէն օր. ինչպէս նաեւ յիշեցնում էր դրանք ոտնակոխ անելու դժբախտութիւնը, որը դրանց կողքով անտարբերութեամբ անցնել եւ հաւաքելու համար ձեռք չերկարելն է:

Եւ որքա՛ն պերճախօս էր սիրելի Կնքամայրս: Մեծագոյն փափաքս էր, որ ոչ թէ միայն ես, այլ ուրիշները նոյնպէս կարողանային լսել իր խօսքերը. ինձ այնքան յուզուած էի զգում, որ կարծում էի, միամտաբար, թէ մեծ մեղաւորներն անգամ, եթէ լսէին իր խօսքերը, կը յուզուէին ինչպէս ես, դարձի կը գային եւ թողնելով իրենց վաղանցուկ հարստութիւնները, կը սկսէին փնտռել յաւիտենական գանձերը:

104. Այն ժամանակ, դեռ ոչ ոք չէր սովորեցրել ինձ մտածական աղօթքի կատարման եղանակը<sup>1</sup>, եւ սակայն ես շատ էի փափաքում իմանալ այն: Միայն թէ Մարիան արդէն իսկ բաւական բարեպաշտ էր համարում ինձ եւ ամէնօրեայ սովորական աղօթքների կատարումն էր միայն թոյլատրում: Մի օր, վարժարանի ուսուցչուհիներիցս մէկը հարցրեց՝ թէ արձակուրդի օրերին ինչո՞վ էի զբաղւում տանը: Պատասխանեցի, որ կծկւում էի անկողնու մի անկիւնում եւ այն վարագոյրով փակում. այնտեղ «մտածում էի»: «Բայց ինչի՞ մասին ես մտածում», – կրկին հարցրեց նա: «Մտածում եմ Աստուծոյ մասին, կեանքի, ... յաւիտենականութեան մասին. մի խօսքով, մտածում եմ»: Այս դէպքը տպաւորուեց բարի մայրապետի յիշողութեան մէջ եւ, աւելի ուշ, յիշեցնում էր ինձ ու հարցնում. «Դեռ մտածո՞ւմ ես»: Այժմ եմ միայն հասկանում, որ իրական մտածական աղօթքն էի կատարում, առանց տեղեակ լինելու սակայն, եւ որ մարդասէրն Աստուած ուսուցանում էր ինձ թաքուն եղանակով:

105. Պատրաստութեանս առաջին երեք ամիսները շատ արագ անցան, եկան հոգեւոր կրթութեան վերջին օրերը, որոնց ընթացքում հարկաւոր էր վարժարանում գիշերել<sup>2</sup>: Չեմ կարող խօսքերով արտայայտել այն քաղցր յիշատակը, որ հոգուս խորքում թողեց այդ հոգեւոր կրթութիւնը. իրօք, եթէ շատ տառապեցի վարժարանում, ապա միեւնոյն ժամանակ առատօրէն վարձատրուեցի այդ սակաւաթիւ օրերի<sup>3</sup> աննկարագրելի երջանկութեամբ: Օրեր Յիսուսի սպասման: Չեմ կարծում, որ

<sup>1</sup> Մտածական աղօթքը կայանում է յաւիտենական ճշմարտութիւնների մասին խորհրդածելու մէջ (օրինակ, այս կեանքի անցողականութիւնը, մահը, դատաստանը, հոգու անմահութիւնը, մարմինների յարութիւնը Յիսուսի երկրորդ գալստեան օրը, Վերջին ահեղ դատաստանը, դժոխքի սարսափելի միայնութիւնը եւ դրախտի յաւիտենական ու բերկրալի երանութիւնը Աստուծոյ հետ, Յիսուսի աստուածային սէրն ու ներողամտութիւնը զղջացող մեղաւորների հանդէպ, Սուրբ Խաչի խորհուրդն ու իմաստը մեր առօրեայ կեանքում, Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամի մայրական պաշտպան բարեխօսութիւնը աստուածային արդարութեան առաջ՝ ի նպաստ դարձի եկող մեղաւորների, անհատների կեանքը Սուրբ Եկեղեցու՝ Աստուծոյ մէկ ընտանիքի մէջ, եւ այլն, եւ այլն): Խորհրդածելու առատ նիւթ ունեն բոլոր նրանք, ովքեր ամէնօրեայ ընթերցողներն են Աստուածաշնչի եւ վերջինի շուրջ Եկեղեցու տուած բացատրութիւնների:

<sup>2</sup> Թերեզան իր Առաջին Հաղորդութիւնը ստացաւ 1884ի Մայիսի 8ին:

<sup>3</sup> Միայն երեք օր:

հնարաւոր է ճաշակել այդ ուրախութիւնը վանական տներէց դուրս: Քանի որ պատրաստուողները թուով քիչ էին, մայրապետների համար հեշտ էր իւրաքանչիւրի հետ առանձին առանձին զբաղուելը, եւ իրօք՝ մեր ուսուցչուհիները խնամում էին մեզ մայրական քնքանքով: Չգիտեմ ինչու, բայց նկատում էի, որ աւելի իմ վրայ էին հսկում՝ քան ուրիշների: ամէն երեկոյ, Առաջին Ուսուցչուհին իր փոքրիկ կանթեղով գալիս էր անկողնու մօտ եւ մի գողտրիկ համբոյր դրոշմում ճակատիս: Մի երեկոյ, յուզուած իր բարութիւնից, ասացի՝ թէ կամենում էի իրեն վստահել մի գաղտնիք: ապա բարձիս տակից խորհրդաւոր կերպով դուրս հանեցի իմ անգին գրքոյկը եւ ուրախութիւնից փայլող աչքերով ցոյց տուեցի նրան: Ուշադրութեամբ թերթեց եւ լուռ հայեացքով հասկացրեց՝ թէ որքա՛ն առանձնաշնորհեալ էի: Առաւօտեան, շատ հաճելի էր տեսնելը՝ թէ ինչպէս էին բոլոր աշակերտուհիները, հազիւ արթնացած, անկողիներէն դուրս ցատկում: Ես նոյնպէս հետեւում էի իրենց օրինակին, բայց վարժուած չէի մենակ հագնուելու եւ չէի կարողանում ինքս ինձ կարգուկանոնի բերել: Մարիան այնտեղ չէր, վարսերս յարդարելու համար, եւ ստիպուած էի, վախուորած դէմքով, սանրս հանդերձասրահի պատասխանատու մայրապետին ներկայացնելու, որը ծիծաղից թուլանում էր, տեսնելով տասնմէկ տարեկան մի աղջնակ, որն ի վիճակի չէ հագնուելու առանց ուրիշի օգնութեան: Այո՛, սանրում էր, բայց ո՛չ Մարիայի քնքշութեամբ, եւ ես էլ իմ հերթին չէի համարձակուում ճշալ, ինչը պատահում էր ամէն օր, Կնքամօրս քնքուշ ձեռքի տակ: Այս կրթութեանս ընթացքում փորձով համոզուեցի, որ մանուկ էի այնքան խնամուած՝ որքան շատ քչերն այս երկրում, յատկապէս նրանց թուով՝ որոնք զուրկ են մայրական խնամքներից: Ամէն օր Մարիան ու Լէոնիան հայրիկի հետ գալիս էին ինձ այցելելու, այնպէս՝ որ երբեք չզգացի ընտանիքից հեռու գտնուելուս փաստը եւ ոչ մի ամպ չմթագնեց հոգեւոր կրթութեանս ջինջ երկինքը:

106. Մեծագոյն ուշադրութեամբ էի ունկնդրում Տէր Դոմէնի<sup>1</sup> ուսուցումները եւ տետրիս մէջ համառօտագրում էի դրանք<sup>2</sup>. Իսկ ինչ վերաբերում է իմ մտքերին, չկամեցայ գրի առնել, մտածելով՝ որ դրանք երբեք չէի մոռանայ: Դա ամբողջովին իրականութիւն դարձաւ:

Ինչպիսի՛ ուրախութեամբ էի մասնակցում բոլոր ժամերգութիւններին, ուխտեալ մայրապետների հետ միասին: Ընկերուհիներիցս տարբերում էի մի մեծ խաչով, որը նուէր էի ստացել Լէոնիայից եւ կրում էի գօտուս վրայ, ինչպէս առաքուած քարոզիչները: Այդ խաչը հիացում էր պատճառում բարի մայրապետներին, որոնք համոզուած էին, որ դա անում էի կարմեղական քրոջս նմանուելու համար: Եւ իրօք, ամբողջ սիրտս ու միտքս նրա հետ էին: Գիտէի, որ նա նոյնպէս հոգեւոր կրթութեան մէջ էր, բայց ո՛չ որպէսզի Յիսուս իրեն նուիրուէր, այլ որպէսզի ինքն ամբողջովին նուիրուէր Յիսուսին, եւ այն էլ՝ ճիշտ առաջին Հաղորդութեանս օրը<sup>3</sup>: Այս էր պատճառը, որի համար սպասմանս ընթացքում կրած միայնութիւնս կրկնակի քաղցր էր ինձ:

107. Յիշում եմ, թէ ինչպէս մի առաւօտ ինձ բուժսենեակ ուղարկեցին, որովհետեւ շատ էի հագում (այն օրուանից, ինչ հիւանդացել էի, ուսուցչուհիներս մեծ ուշադրութիւն էին դարձնում վրաս, թեթեւ գլխացաւի համար անգամ ուղարկում էին մաքուր օդի կամ բուժսենեակում հանգստանալու, եւ նոյնը, եթէ

<sup>1</sup> Տէր Վիթթոր Լուի Դոմէնը Լիզեոյի Բենեդիկտեան մայրապետների խոստովանահայրն էր:  
<sup>2</sup> Այդ փոքրիկ տետրակն այժմ պահւում է Լիզեոյի Կարմեղոսի դիւանում:  
<sup>3</sup> Քոյր Ագնէս Յիսուսի ուխտադրութեան օրը համընկնում էր Թերեզայի առաջին Հաղորդութեան օրուան:

սովորականից մի քիչ աւելի գունատ էի լինում): Ներս մտաւ Սելինը, որ թոյլտուութիւն էր ստացել ինձ տեսնելու, եւ տուեց այն նկարը, որն այնքա՛ն հաճելի էր ինձ. «Աստուածային Բանտարկեալի Մաղիկը»: Իմ համար մեծ ուրախութիւն էր Սելինի ձեռքից այդ յիշատակի ստացումը: Քանի՛ քանի՛ սիրավառ մտածումներ ունեցայ այդ պատկերի շնորհիւ:

108. Մեծ օրուայ նախօրեակին, արձակուամ ստացայ երկրորդ անգամ. ընդհանուր խոստովանանքը համատարած խաղաղութիւն հաստատեց հոգուս մէջ եւ մարդասէրն Աստուած թոյլ չտուեց, որ որեւէ հողմ խռովէր այն: Նամակ էի գրել հայր Փիշոնին եւ յանձնել ինձ իր աղօթքներին, ասելով՝ որ շուտով ես նոյնպէս դառնալու էի կարմեղական եւ այնժամ նա էր լինելու իմ հոգեւոր առաջնորդը (սա իրականացաւ չորս տարի յետոյ. նա էր, որին առաջին անգամ յայտնեցի հոգուս գաղտնիքները, երբ արդէն կարմեղոսում էի): Մարիան բերեց նրա պատասխան նամակը. իրօք՝ շատ երջանիկ էի: Բոլոր ուրախութիւններն այդ շրջանում միասին էին տեղում վրաս: Իր նամակում ինձ ամենահաճելի հաստուածը սա էր. «Վաղը խորան եմ բարձրանալու քո եւ Փօլինիդ համար»: Մայիսի ծին, Փօլինն ու Թերեզան իրար միացան ինչպէս երբեք, քանի որ Յիսուս ողողեց նրանց իր սահման չճանաչող շնորհներով:

109. Եւ վերջապէս հասաւ կեանքիս բոլոր օրերի մէջ ամենագեղեցիկը: Ինչպիսի անմոռանալի յուշեր թողեցին հոգուս խորքում այդ երկնային օրուայ ամենափոքրիկ մանրամասներն անգամ: Ուրախ զարթօնքը արշալոյսին, յարգալի եւ միեւնոյն ժամանակ մտերիմ համբոյրները ուսուցչուհիների ու մեծահասակ աշակերտուհիների: Հանդերձասրահը լի էր ձեան փաթիլների նմանուող սպիտակ զգեստներով, որոնցով հերթով զգեստաւորում էին այդ հանդիսաւոր օրուայ փոքրիկ հերոսուհիները: Յատկապէս մեր մուտքը մատուռ եւ առաւօտեան այնքա՛ն գեղեցիկ օրհներգը. «Ո՛վ սուրբ Խորան, շուրջբոլորդ հրեշտակներով պատուած»:

Բայց չեմ կարող եւ չեմ ուզում պատմել ամէն բան. կան իրողութիւններ, որ կորցնում են իրենց բոյրը, հազիւ թէ ի ցոյց են դրւում բաց օդի մէջ: Կան հոգեւոր մտածումներ, որոնք անհնարին է երկրային լեզուին թարգմանել առանց կորցնելու նրանց խոր ու երկնային իմաստը. նման են այն «սպիտակ քարին, որ տրուելու է յաղթողներին, եւ որի վրայ գրուած է լինելու մի անուն, որը ոչ ոք չգիտէ, բացի նրանից՝ ով ստանում է այն»<sup>1</sup>: Ա՛հ, քանիցս քաղցր եղաւ հոգուս տրուած Յիսուսի առաջին համբոյրը:

Դա սիրոյ համբոյր էր, ինձ զգում էի սիրուած եւ անդադար կրկնում էի. «Սիրում եմ Քեզ, Աստուած իմ, անձա Քեզ եմ նուիրում յաւիտեան»: Այդտեղ չկար ոչ մի խնդրանք, ոչ մի պայքար, ոչ մի գոհողութիւն. վաղուց ի վեր Յիսուս եւ փոքրիկ խեղճ Թերեզան դիտել էին միմեանց ու հասկացել ... : Այդ օրուայ դէպքը մի պարզ հայեացք չէր այլեւս, այլ՝ խառնում: Երկու տարբեր անձինք չէին, Թերեզան անտեսանելի էր դարձել, ինչպէս ջրի կաթիլն օվկիանոսում: Միայն Յիսուս էր մնացել. Տէրն էր, Թագաւորը: Թերեզան նրանից խնդրել էր վերցնել իր ազատութիւնը, որովհետեւ ազատութիւնը նրան սարսափեցնում էր. նա իրեն զգում էր այնքա՛ն տկար, այնքա՛ն դիւրաբեկ, որ տենչում էր առյաւէտ միանալ աստուածային Զօրութեանը: Նրա ուրախութիւնը չափազանց մեծ էր, չափազանց խոր, եւ նա չէր կարող զսպել իրեն: Քաղցր արցունքները ողողեցին նրան շուտով, ի զարմանս ընկերուհիների, որոնք աւելի ուշ հարցնում էին միմեանց. «Ինչո՞ւ արտասուեց: Գուցէ խղճի խա՞յթ ունեցաւ»: «Ո՛չ, ամենահաւանական պատճառն այն է,

<sup>1</sup> Յյտ 2, 17

որ մայրիկն իր հետ չէ, ինչպէս նաեւ քոյրը, որին շատ է սիրում եւ որը կարմեղական է»։ Չէին հասկանում, որ երկնային ամբողջ ուրախութիւնը մէկ սրտի մէջ լցուելով, դեռ աքսոր կրող այս սիրտը չէր կարող դիմանալ դրան առանց արցունքներ հեղելու։ Ա՛հ ո՛չ, մայրիկի բացակայութիւնը ցաւ չէր պատճառում ինձ. մի՞թէ Երկինքը չէր իմ սրտում։ Եւ մի՞թէ մայրիկս Երկինքում չէր վաղուց ի վեր։ Ո՛չ էլ Փօլինի բացակայութեան համար էի արտասուում. այո՛, կը նախընտրէի նրան իմ հետ տեսնել, բայց զոհս ընդունուած էր Երկինքի կողմից։ Այդ օրը, միայն ուրախութիւնն էր լցնում սիրտս. ես ինձ միացնում էի նրան՝ ով Յիսուսին էր ձօնում իր կեանքը անվերադարձ կերպով, իսկ Յիսուս ինձ էր նուիրում այնքան սիրով։

110. Կէսօրին, ես ընթերցեցի Սուրբ Կոյսին նուիրուելու աղօթքը։ Ուսուցչուհիներս ինձ էին ընտրել թերեւս այն պատճառով, որ մանուկ հասակիցս ի վեր զրկուել էի երկրային մայրիկից։ Ամբողջ սրտովս խօսեցի իր հետ, նուիրուեցի իրեն, ինչպէս մանուկն է նետում մօր բազուկների մէջ եւ խնդրում, որ պաշտպանի իրեն։ Եւ ինձ թւում է՝ թէ Սուրբ Կոյսը բարեգութ ակնարկ է ուղղել իր փոքրիկ ծաղկի վրայ եւ ժպտացել է նրան. նոյն ինքը չէ՞ր, որ առողջացրել էր ինձ իր տեսանելի ժպիտով. նոյն ինքը չէ՞ր, որ իր խոնարհ ծաղկի բաժակի մէջ էր դրել իր Յիսուսին, որ դաշտերի Ծաղիկն է, դալարագեղ հովիտները զարդարող Շուշանը<sup>1</sup>։

111. Այդ գեղեցիկ օրուայ երեկոյեան, կրկին իմ երկրային ընտանիքում էի. առաւօտեան, Պատարագից յետոյ, արդէն իսկ կարողացել էի կրծքիս սեղմել սիրելի հայրիկիս եւ միւս բոլոր ազգականներս, բայց ի մի հաւաքումը միայն այնժամ եղաւ իրական ու ամբողջական, երբ հայրիկը, իր փոքրիկ թագուհու ձեռքը բռնելով, ուղղուեց դէպի Կարմեղոս։ Այնտեղ տեսայ իմ Փօլինին, Յիսուսի հարս դարձած, տեսայ նրան իմ քօղի պէս սպիտակ քօղով, վարդերի պսակով։ Ա՛հ, ուրախութիւնս դառնութեամբ խառը չէր, յոյսն ունէի իրեն շուտով հասնելու եւ միասին սպասելու դէպի Երկինք մեկնումին։ Անտարբեր չգտնուեցի նաեւ Բուխոնէում պատրաստուած ընտանեկան հանդէսի հանդէպ, որը կազմակերպուել էր առաջին Հաղորդութեանս օրուայ երեկոյեան։ Գեղեցիկ ժամացոյցը, որ նուէր ստացայ թագաւորիս կողմից, մեծ հաճոյք պատճառեց ինձ. ուրախութիւնս, սակայն, հանդարտ էր եւ ոչինչ չկարողացաւ խռովել ներքին անդորրս։ Այդ գիշեր, Մարիան իր սենեակում պառկեցրեց ինձ, գիշեր՝ որ յաջորդեց այդ զմայլելի օրուան, քանի որ ամենապայծառ օրերին անգամ յաջորդում է խաւարը։ Միմիայն Երկինքի առաջին, միակ, յաւերժական Հաղորդութեան օրն է լինելու առանց մայրամուտի։

112. Գեղեցիկ էր նաեւ յաջորդ օրը, միայն թէ մի քիչ թախծոտ։ Նոր զգեստը, որն իմ համար գնել էր Մարիան, բոլոր նուէրները, որ ստացել էի, չէին յագեցնում սիրտս. Յիսուս էր միայն, որ կարող էր գոհացնել ինձ եւ այն հոգեպարար պահն էի երագում, երբ կը կարողանայի իրեն միանալ երկրորդ անգամ։ Առաջին Հաղորդութիւնիցս մօտ մէկ ամիս անց, գնացի խոստովանուելու, Համբարձման տօնի կապակցութեամբ, եւ համարձակուեցի հաղորդուելու թոյլտուութիւն խնդրել։ Երջանկութիւնն ունեցայ տեսնելու յոյսերիս լիով իրականացումը. քահանան թոյլ տուեց եւ հնարաւորութիւնն ունեցայ Խորանի առջեւ ծնրադրելու, հայրիկի ու Մարիայի հետ միասին։ Յիսուսի այս երկրորդ այցելութեան վերաբերեալ ինչպիսի քաղցրիկ յուշեր են պահպանուել հոգուս խորքում։ Արցունքներս կրկին հոսեցին անպատմելի քաղցրութեամբ, մտովին անդադար կրկնում էի Պօղոս Առաքեալի

<sup>1</sup> Երգ 2, 1

խօսքերը. «Այլեւս ես չէ, որ ապրում եմ, այլ ապրում է ինձնում Քրիստոս»<sup>1</sup>: Այդ հաղորդութիւնից յետոյ, Աստծոյ հետ միանալու փափաքս գնալով աւելի ու աւելի աճեց եւ հաղորդուելու թոյլտուութիւն ստացայ բոլոր մեծ տօների առթիւ: Այդ երջանիկ օրերի նախօրեակներին, Մարիան իր ծնկների վրայ էր առնում ինձ եւ պատրաստում այնպէս, ինչպէս առաջին Հաղորդութեան օրը. յիշում եմ թէ ինչպէս մի օր խօսեց վշտակրութեան մասին, ասելով՝ որ թերեւս երբեք էլ չքայլեմ նրա արահետներում, այլ՝ որ բարին Աստուած ինձ իր ձեռքերում կը կրի ինչպէս մի մանուկ:

113. Զրոյցից յետոյ, յիշողութեանս մէջ կրկին լսեցի Մարիայի խօսքերը. զգացի, որ սրտիս խորքում ծնւում էր վշտակրութեան հանդէպ մի մեծ ծարաւ, եւ միեւնոյն ժամանակ խոր վստահութիւն, որ Յիսուս իմ համար պատրաստել էր բազմաթիւ խաչեր: Այնքան վիթխարի միտքարութեամբ ողորդուեցի, որի նմանը այլեւս չվայելեցի ամբողջ կեանքիս ընթացքում: Տառապանքը գաղափարականս դարձաւ, այնպիսի հմայք ունէր, որ հիացնում էր ինձ, թէեւ այն այնքան էլ լաւ չէի ճանաչում: Մինչ այդ, տառապել էի առանց սիրելու տառապանքը. այդ օրուանից սկսած, մի տեսակ հակում զգացի նրա նկատմամբ: Զգում էի նաեւ միմիայն Աստծուն սիրելու բաղձանքը, միմիայն Նրանում երջանկութիւն գտնելու փափաքը: Յաճախ էի հաղորդութիւններիս պահին կրկնում Նմանութեան գրքի խօսքերը. «Ո՛վ Աստուած իմ, անպատում քաղցրութիւն, իմ համար դառնացրու նիւթական բոլոր միտքարութիւնները»<sup>2</sup>: Այս աղօթքը շուրթերիցս յորդում էր առանց որեւէ ջանքի, առանց ինքս ինձ ստիպելու. թւում էր՝ թէ իմ կամքով չէ, որ բարբառում էի այն, այլ նմանում էի փոքրիկ մանկանը, որն ակամայ կրկնում է իրեն հարազատ անձանց խօսքերը: Կը յայտնեմ աւելի ուշ, Մայր իմ, թէ Յիսուս ինչպէս ուզեց իրագործել իր կամքը, եւ թէ ինչպէս միայն ինքը եղաւ իմ անպատում քաղցրութիւնը: Եթէ դրա մասին խօսեմ այժմ, ստիպուած կը լինեմ անցնել կեանքիս երիտասարդական շրջանին, մինչդեռ բաւական դէպքեր ունեմ պատմելիք մանկութեանս տարիների մասին:

114. Առաջին Հաղորդութիւնիցս շատ չանցած, կրկին հոգեւոր կրթութեան մէջ մտայ. այս անգամ, սակայն, Դրոշմի խորհուրդը ստանալու համար<sup>3</sup>: Մեծ խնամքով էի պատրաստուել Սուրբ Հոգու այցելութեանը. չէի կարողանում հասկանալ՝ թէ ինչպէս ոմանք մեծ կարեւորութիւն չէին տալիս այս Սիրոյ Խորհրդին: Սովորաբար, մէկ օր էր տեւում Դրոշմին նախապատրաստող հոգեւոր կրթութիւնը, բայց քանի որ Գերապայծառը չկարողացաւ ժամանել որոշուած օրը, հնարաւորութիւնն ունեցայ ճաշակելու միայնութիւնը երկու օրերի: Որքան զուարթ էր հոգիս: Առաքեալներին նմանուելով, կարօտով էի սպասում Սուրբ Հոգու այցելութիւնը: Յատկապէս այն միտքն էր ուրախութիւն պատճառում, որ շուտով կատարեալ քրիստոնեայ էի դառնալու եւ այլեւս յաւէտ ճակատիս վրայ կրելու էի միւռոնահետք խորհրդաւոր խաչը, որով Եպիսկոպոսը ճակատս կնքեց ծիսական արարողութեան ընթացքում: Վերջապէս հասաւ երջանիկ պահը. Հոգեգալստեան սաստիկ հողմը չզգացի, այլ աւելի՛ այն մեղմ գեփիւռը, որի շէրերը լսեց Եղիա մարգարէն Քորեբ լեռան վրայ<sup>4</sup>: Այդ օրն անսպառ ուժեր ստացայ վշտակրութեան համար, որովհետեւ այլեւս շուտով սկսուելու

<sup>1</sup> Գղտ 2, 20

<sup>2</sup> Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, ԻՉ 3

<sup>3</sup> Թերեզյան Դրոշմը ստացաւ Բէյէոյի եպիսկոպոսի՝ գերապայծառ Հիւգոնէնի ձեռքով, 1884ի Յուն. 14ին, շաբաթ:

<sup>4</sup> 1Թգ 19, 12

էր հոգու մարտիրոսութիւնը: Դրոշմիս կնքամայրը եղաւ Լէոնիան. այնքան էր յուզուել, որ չկարողացաւ արցունքների գեղումը զսպել ամբողջ ծիսակատարութեան ժամանակ: Միասին ընդունեցինք Սուրբ Հաղորդութիւնը, որովհետեւ այդ օրը նոյնպէս Յիսուսին միանալու երանութիւնն ունեցայ:

115. Այս սքանչելի ու անմոռանալի տօներից յետոյ, կեանքիս ընթացքը կրկին մտաւ իր առօրեայ հունի մէջ, այսինքն՝ պարտաւոր էի վերադառնալ դպրոցական օրակարգիս պահպանմանը, որն իմ համար այնքա՛ն տհաճ էր: Առաջին Հաղորդութեանս օրերին, շատ հաճելի էր համատեղ կեանքը ինձ հասակակից այն դասընկերուհիներիս հետ, որոնք լի էին բարի կամքով եւ անսասան որոշումն ունէին գործադրելու առաքիլութիւնները: Բայց ստիպուած էի յարաբերութիւններ ունենալ նաեւ բացարձակապէս տարբեր բնաւորութեան տէր, ցրուած, անկարգապահ աշակերտուհիների հետ. իսկ սա խոչընդոտ էր խաղաղութեանս համար: Չեմ կարող ասել՝ թէ մելամաղձոտ բնաւորութիւն ունէի, ընդհակառակն՝ աշխոյժ էի, բայց չէի կարողանում տարիքիս համապատասխան խաղերով զբաղուել: յաճախ էի դասամիջոցների պահին յենւում մի որեւէ ծառի եւ տրւում լուրջ խորհրդածումների: Մի ժամանց էի նաեւ յօրինել, որը շատ հաճելի էր ինձ. հաւաքում եւ թաղում էի այն խեղճ թռչնակներին, որոնց մեռած էի գտնում ծառերի տակ: Միրում էի նաեւ պատմութիւններ պատմել, որոնք առատօրէն պտտւում էին մտքումս: Այդպիսի պահերին, շրջապատւում էի ընկերուհիներով, յաճախ մեծ աշակերտուհիներից նոյնպէս միանում էին ունկնդրուհիների բազմութեանը: Միեւնոյն պատմութիւնը տեւում էր մի քանի օր, որովհետեւ սիրում էի այն օրէցօր աւելի հետաքրքրական դարձնել: Բայց շուտով ուսուցչուհիս արգելեց շարունակել հոետորի մասնագիտութիւնս, պահանջելով աւելի խաղալ ու վագել, քան ճառախօսել:

116. Հեշտութեամբ էի ըմբռնում բացատրուող դասերի իմաստը, բայց հաւանոր նեղութիւն էր դրանք բառ առ բառ սովորելը: Այսպիսին էր իրավիճակը նաեւ քրիստոնէականի դասերի պարագային<sup>1</sup>, առաջին Հաղորդութեանս նախորդող ամբողջ տարուայ ընթացքում. գրեթէ ամէն օր թոյլտուութիւն էի խնդրում այն ընդմիջման պահին սովորելու: Ձանքերս արդիւնալի եղան եւ գրեթէ միշտ առաջինն էի դասարանում: Եթէ յանկարծ միայն մի մոռացուած բառի համար կորցնում էի պատուաւոր տեղս, ամբողջ տհաճութիւնս արտայայտւում էր աղի արցունքներով, որոնց դէմ չգիտէր ինչպէս պայքարէր մեծարգոյ Տէր Դոմէնը: Շատ գոհ էր ինձնից (երբ չէի արտասւում) եւ «իմ փոքրիկ վարդապետ» էր կոչում ինձ, «Թերեզա» անուանս պատճառով: Մի օր, ինձնից յետոյ գրատախտակի մօտ կանչուած աշակերտուհին չկարողացաւ յիշել հարցերից մէկը: Գերապատիւ Վարդապետը, բոլոր աշակերտուհիներին հերթով հարցնելով եւ որեւէ պատասխան չստանալով, վերադարձաւ ինձ եւ ասաց, որ կամենում էր տեսնել՝ թէ իրօք արժանի՞ էի առաջին տեղին: Ես արդէն իսկ, խորին խոնարհութեամբ, դրան էի սպասում. ոտքի ելայ եւ վստահ ձայներանգով պատասխանեցի այն հարցին, որ պահանջում էր ինձնից, առանց որեւէ սխալի եւ ի գարմանս բոլորի: Առաջին Հաղորդութիւնիցս յետոյ էլ պահպանեցի նոյն սէրս քրիստոնէականի հանդէպ: Ուսումներս ընթանում էին մեծ յաջողութեամբ, գրեթէ միշտ առաջինն էի, ամենամեծ յաղթանակներս պատմութեան ու գեղագրութեան ասպարէզներում էի տօնում: Բոլոր ուսուցչուհիներս էլ խելացի էին համարում ինձ, բայց նոյնը չէր պատահում մօրեղբօրս պարագային, որի աչքին

<sup>1</sup> «Քրիստոնէական» են կոչւում այն դասերը, որոնց ընթացքում դասաւանդւում է Քրիստոնէայ Եկեղեցու ուսմունքը կամ վարդապետութիւնը:

մի փոքրիկ տգէտ էի, այո՛ բարի եւ հեզ, ուղիղ դատողութիւն ունեցող, բայց անկարող ու անճարակ:

117. Ինձ, սակայն, չի զարմացնում մօրեղբօրս եւ իր կնոջ կարծիքը, որովհետեւ վախուորած բնաւորութեանս պատճառով՝ գրեթէ երբեք չէի խօսում: Երբ գրում էի, "կատուի գիրս" եւ "ուղղագրութիւնս" շատ բնական էին, բայց հրապուրիչ ոչինչ չունէին: Կարի, ասեղնագործութեան եւ ուրիշ փոքր աշխատանքներիս մէջ, վարժուհիներիս բարեհաճութեանը որպէս արդիւնք, լաւ յաջողութիւններ էի գրանցում, սա ճիշտ է, բայց այն ձախակեր ու անճարակ կերպը՝ որով բռնում էի գործուածքը, արդարացնում էր նրանց աննպաստ կարծիքը, որ կազմել էին իմ մասին: Սա, սակայն, համարում եմ նաեւ մեծ շնորհ. մարդասէրն Աստուած, կամենալով միայն իրեն վերապահել խեղճ սիրտս, արդէն իսկ ընդունել եւ ի կատար էր ածել աղօթքս, «դառնութեան փոխելով այս աշխարհի մխիթարութիւնները»: Դրա կարիքն այնքան ունէի՝ որքան պարտաւոր էի անտարբեր լինել գովասանքների հանդէպ: Յաճախ էր առջեւ ծառանում ուրիշների խելացիութիւնը, երբեք՝ իմը: Արդիւնքում եզրակացրի, որ իրօք չունէի այդ ձիրքերը եւ համակերպուեցի ինձ դրանցից զուրկ տեսնելու հետ:

118. Խիստ զգայուն եւ սիրող սիրտս հեշտութեամբ կը նուիրուէր, եթէ իրեն ըմբռնելու ընդունակ մի ուրիշ սիրտ գտնէր: Աշխատեցի բարեկամութիւն հաստատել ինձ տարեկից աշակերտուհիների հետ, յատկապէս երկուսի. նրանց կապուած էի ամբողջ սրտով եւ նրանք նոյնպէս սիրում էին ինձ որքան կարողանում էին: Բայց աւա՛ղ, քանիցս սահմանափակ ու փոփոխական է արարածների սիրտը: Շուտով համոզուեցի, որ բարի կամքս չէր հասկացուել: Ընկերուհիներիցս մէկը հարկադրուեց ընտանիք վերադառնալ, եւ դասերը վերսկսեց մի քանի ամիս յետոյ միայն: Բացակայութեան ընթացքում միշտ մտածում էի իր մասին եւ հոգաւատ խնամքով պահպանում այն փոքրիկ օղածեւ մատանին, որ նա էր նուիրել ինձ: Երբ նրան կրկին տեսայ, ուրախութիւնս մեծ եղաւ: Աւա՛ղ, անտարբեր հայեացքով միայն վարձատրուեցի ... : Մտերմութիւնս չէր հասկացուել, զգացի դա: Զգացի, եւ այլեւս գորով չմուրացի, որն արդէն մերժուել էր ինձ: Բայց մարդասէրն Աստուած այնքան սիրող ու զգայուն սիրտ է ստեղծել ինձնում, որ եթէ մէկին սիրում եմ մաքուր կերպով, սիրում եմ նրան այլեւս ընդմիշտ: Այժմ էլ շարունակում եմ աղօթել այդ ընկերուհու համար եւ դեռեւս սիրում եմ նրան:

119. Նկատել էի, որ Սելինը յատուկ մտերմութիւն ունէր մեր ուսուցչուհիներից մէկի հետ. կամեցայ նմանուել իրեն, բայց արարածների համակրանքը չահելու գործում հմուտ չլինելով, չյաջողուեցի: Ո՛վ երջանիկ անգիտութիւն: Քանի՛ քանի՛ չարիքներից փրկեցիր ինձ: Որքան եմ երախտապարտ Յիսուսին, «աշխարհային ընկերութիւններում միայն դառնութիւններ գտնելու համար»: Որեւէ մէկի համար դժուար չէր լինի վերցնել իմ սրտի նմանը ունեցողին եւ կտրել թեւերը. այնժամ ինչպէ՞ս կը կարողանայի «թռչել ու հանգչել»<sup>1</sup>: Մարդկային մտերմութիւններին անձնատուր եղած սիրտն ինչպէ՞ս կարող է սերտօրէն միանալ Աստծուն: Զգում եմ, որ անհնարին է: Առանց երբեւէ խմած լինելու արարածների չափազանց այրող սիրոյ թունաւոր բաժակից, զգում եմ, որ չեմ խաբել ինքս ինձ: Տեսել եմ շատ հոգիների թռիչքը, հրապուրուած՝ այդ կեղծ լոյսից, նման այն խեղճ թիթեռնիկներին, որոնք նետուում են մոմի բոցի մէջ եւ այրում իրենց թեւերը. ապա, կրկին վերադառնում էին ճշմարիտ Սիրոյ քաղցրաբոյր լոյսին, որն իրենց տալիս էր նոր թեւեր, աւելի

<sup>1</sup> Սղմ 54, 7

չքեղափայլ ու ակելի թեթեւ, որպէսզի մեղմօրօր սաւառնել կարողանային դէպի Յիսուս, Աստուածային Կրակը, որն «այրում է առանց սպառելու»<sup>1</sup>: Ա՛հ, գիտեմ, Յիսուս փորձութեան ենթարկելու համար շատ տկար էր տեսնում ինձ: Թերեւս ամբողջովին այրուէի այդ խաբուսիկ լոյսից, եթէ նրա փայլելը տեսնէի աչքերիս առաջ ... : Բայց այդպէս չեղաւ: Ես միայն դառնութիւն գտայ այնտեղ, ուր ակելի հօր հոգիները հանդիպում են բերկրանքի եւ պայքարում են հաւատարմութիւնից միայն դրդուած: Հետեւաբար, իմ արժանիքը չէ, որ չեմ տրուել արարածների սիրոյն, այլ ակելի շուտ՝ վերապահուել եմ նրանից ըստ Տիրոջ մեծ ողորմութեան: Խոստովանում եմ, որ առանց իր օգնութեան, ակելի վար կ'ընկնէի՝ քան Սրբուհի Մագդաղէնացին դարձի գալուց առաջ: Եւ հոգուս խորքում կարկաչուն ղօղանջով են արձագանքում Սիմոն փարիսեցուն ուղղուած մեր Տիրոջ խորիմաստ խօսքերը:

120. Այո՛ գիտեմ, «ո՞ւմ քիչ է ներում, նա քիչ է սիրում»<sup>2</sup>, բայց նաեւ գիտեմ, որ Յիսուս ինձ ակելի ներեց՝ քան Սրբուհի Մագդաղէնացուն, քանի որ ներեց ինձ կանխաւ, չթողնելով՝ որ ընկնեմ: Ա՛հ, որքան եմ կամենում ակելի յստակ կերպով արտայայտել այն՝ ինչ զգում եմ: Ահա մի օրինակ, որը կը բացատրի մտքերս: Ենթադրենք, որ մի փորձառու բժշկի տղան իր ճանապարհին քարի է հանդիպում, ոտքը խփում, ընկնում եւ կոտորում ձեռքը: Իսկոյն վրայ է հասնում հայրը, բարձրացնում նրան մեծ սիրով, ինամում նրա վէրքերը, գործի դնելով իր արուեստի ընձեռած հնարաւոր բոլոր միջոցները: Շուտով առողջանալով, տղան իր խորին երախտագիտութիւնն է յայտնում հօրը: Եւ իրօք, հիմնաւոր է բարերար հօր հանդէպ տածած իր անհուն սէրը: Բայց ահա մի այլ ենթադրութիւն: Հայրը, իմանալով՝ որ իր որդու ճանապարհին քարեր կան, շտապում է, նրանից առաջ անցնում եւ, առանց որդու գիտութեան, մի կողմ է նետում քարերը: Անշուշտ այս որդին, առարկան իր հօր նախահոգ ինամքի, չտեսնելով այն փորձանքը, որից ազատուել է հօր շնորհիւ, չի յայտնի նրան երախտիքի ոչ մի զգացում եւ կը սիրի նուազ, քան եթէ վնասուած ապա բժշկուած լինէր: Բայց եթէ տեղեկանայ՝ թէ ինչպիսի վտանգից է ազատուել, արդեօք առաւելագոյնս չի՞ սիրի իր հօրը: Ե՛ս եմ այդ որդին, առարկան նախահոգ սիրոյ, մի Հօր՝ որն իր Խօսքը չուղարկեց փրկելու արդարներին, այլ՝ մեղաւորներին<sup>3</sup>: Ուզում է, որ իրեն սիրեմ, որովհետեւ ոչ թէ շատ ներեց ինձ, այլ ներեց ամբողջը: Չսպասեց, որ ես իրեն շատ սիրեմ, ինչպէս Սրբուհի Մագդաղէնացին, այլ ուզեց՝ որ իմանամ՝ թէ ինչպէս ինքը սիրեց ինձ անձառելի նախատեսութեամբ, որպէսզի արդ սիրեմ իրեն իսնթի նման: Շատ եմ լսել հոգեւոր կրթութիւնների ժամանակ եւ այլուր, թէ չկայ մի մաքուր հոգի, որն ակելի սիրի՝ քան դարձի եկող մեղաւորը: Ա՛հ, որքա՛ն կ'ուզէի անէացնել այս խօսքերը:

121. Բայց շատ հեռացայ նիւթիցս, ուրեմն՝ շտապեմ վերադառնալ նրան: Առաջին Հաղորդութեանս յաջորդող տարին անցաւ առանց իւրայատուկ փորձութիւնների. տարեդարձային Հաղորդութեանը կապուած հոգեւոր կրթութեան<sup>4</sup> ժամանակ էր միայն, որ ինձ պաշարուած տեսայ խղճահարութիւնների սարսափելի հիւանդութեամբ: Հարկաւոր է անցնել այս մարտիրոսութեան միջով, այն ակելի լաւ հասկանալու համար. անհնարին է խօսքերով արտայայտել՝ թէ որքան տառապեցի այդ մէկուկէս տարուայ ընթացքում: Ամենապարզ մտքերս ու գործերս անգամ պատճառ

<sup>1</sup> Հմմտ. Ել 3, 2: Ինչպէս նաեւ՝ SAN GIOVANNI DELLA CROCE, *Fiamma viva d'amore*, str. 2, commento. *Opere*, Roma 1976.

<sup>2</sup> Ղկս 7, 47

<sup>3</sup> Մտթ 9, 13; Ղկս 5, 32

<sup>4</sup> Այս կրթութիւնը տեւեց 1885ի Մայիսի 17ից մինչեւ Մայիսի 21ը:

էին դառնում վրդովման ու տագնապի: Միայն այն պահերին էի խաղաղում, երբ ամէն ինչ պատմում էի Մարիային, բայց սրա համար շատ թանկ էի վճարում, որովհետեւ ստիպուած էի լինում յայտնելու նրան նաեւ այն բոլոր տարօրինակ մտածումներս, որոնք հէնց իրեն էին վերաբերում: Հագիւ էի բեռներս վար դնում, մի պահ միայն տեւող անդորր էի վայելում, որն անցնում էր կայծակնային արագութեամբ եւ իր տեղը գիջում հոգուս մարտիրոսութեան վերսկսմանը: Ուրքա՛ն համբերութիւն էր հարկաւոր Մարիային, այդ այնքա՛ն սիրելի քրոջս, ինձ լսելու եւ ձանձրոյթի մի նշան անգամ չտալու համար: Երբ վերադառնում էի վարժարանից, սկսում էր մագերս կարգուկանոնի բերել (սա անում էր ամէն օր, հայրիկին հաճոյք պատճառելու համար, ի զարմանս դասընկերուհիներիս եւ յատկապէս ուսուցչուհիներիս, որոնք շատ հազուադէպ էին հանդիպում ծնողների կողմից այսքան խնամուած մանկանց), որի ամբողջ տեւողութեանը չէի դադարում արտասուելուց եւ բոլոր խղճահարութիւններս մի առ մի պատմելուց:

Տարուայ վերջում, Սելինը ուսումները վերջացնելով տուն վերադարձաւ եւ խեղճ թերեզան, որ ստիպուած էր այլեւս միայնակ յաճախել դպրոց, շատ չանցած հիւանդացաւ: Միակ հանգամանքը, որ ձգում էր նրան վարժարան, իր անբաժանելի Սելինի հետ ապրելն էր, եւ «փոքրիկ դստրիկը» չկարողացաւ այնտեղ մնալ առանց նրա:

122. Վարժարանից դուրս ելայ, ուրեմն, տասներեք տարեկան հասակում<sup>1</sup>, եւ ուսումներս շարունակեցի՝ զանազան դասեր առնելով Տիկին Փափինոյից: Շատ բարի եւ շատ զարգացած անձնաւորութիւն էր, բայց տարեց անամուսին աղջկայ վարուելակերպն ունէր եւ ապրում էր իր մօր հետ: Շատ սիրունիկ էր այդ փոքրիկ ընտանիքը, որը կազմում էին երեք հոգիով միասին (որովհետեւ էգ կատուն էլ էր ընտանիքի մաս կազմում եւ ես պէտք է յանդուրժէի, որ թաւալուէր տետրերիս վրայ, եւ նոյնիսկ պէտք է զմայլուէի իր գեղեցիկ ճարպիկութիւններով): Առաւելութիւնն ունէի ընտանիքի մտերմութեան մէջ ապրելու. Բուխտնէն բաւական հեռու լինելով դասախօսուհուս մի քիչ ծերացած ոտքերի համար, խնդրել էր՝ որ ես գնայի իր մօտ: Երբ ժամանում էի, սովորաբար միայն Տկն. Քոչէնին<sup>2</sup> էի հանդիպում, որը նախ դիտում էր ինձ իր խոշոր վճիտ աչքերով, ապա շեշտուած ու հանդարտ ձայնով կանչում. «Տիկին Փափինո՛յ ... Օրիորդ Թերեզան է եկել»: Դուստրը պատասխանում էր պատրաստակամօրէն, իր մանկական ձայնով. «Եկա՛յ, մամմա»: Եւ իսկոյն սկսում էր դասը:

123. Այս դասերը ունէին նաեւ հետեւեալ առաւելութիւնը. բացի ուսումից՝ որ ստանում էի, օգնում էին ինձ նաեւ ճանաչելու աշխարհը ... : Ո՞ւմ մտքով կ'անցնէր: Սակայն, այդ սենեակում, որ զարդարուած էր հնաոճ կահոյքով եւ լի էր գրքերով ու տետրակներով, յաճախ էի ներկայ գտնում ամէն տեսակ այցելութիւնների. քահանաներ, պարոններ, տիկիներ, եւ այլն: Զրոյցների մեծամասնութիւնն իր վրայ էր վերցնում Տկն. Քոչէնը, որպէսզի դուստրը ինձնով զբաղուելու հնարաւորութիւնն ունենար, բայց նմանատիպ օրերին շատ չէի սովորում: Քիթս գրքի մէջ խոթած, լսում էի այն ամէնն՝ ինչ ասում էր, նաեւ բաներ՝ որ ակելի լաւ կը լինէր ինձ չլսել երբեք. ունայնութիւնը առանց յատուկ ճիգերի է թափանցում սրտից ներս: Տիկիներից մէկն ասում էր, որ գեղեցիկ մագերս ունէի. միւսը, դուրս գալով ու կարծելով՝ թէ չեմ լսում, հարցնում էր՝ թէ ո՞վ էր այդքան հաճելի արտաքինով օրիորդը. եւ նման ուրիշ շատ բաներ, որոնք ակելի հաճելի էին՝ երբ չէին ասում իմ

<sup>1</sup> Թերեզան դպրոցը թողեց 1885-1886 ուսումնական տարուայ երկրորդ կիսամեակին:

<sup>2</sup> Տկն. Քոչէնը տիկին Փափինոյի մայրն էր. ապրում էին երկուսով միասին:

ներկայութեանը, եւ որոնք մի ուրախ զգացում էին թողնում հոգուս խորքում, որից էլ հեշտութեամբ հասկանում էի՝ թէ որքան լի էի անձնասիրութեամբ:

124. Ա՛հ, որքան եմ կարեկցում այն հոգիներին, որոնք կորում են: Այնքա՛ն հեշտ է այս աշխարհի ծաղկազարդ արահետներում մոլորուելը: Անշուշտ, այն անձանց համար, որոնք հոգեպէս մի քիչ բարձր են, աշխարհի կողմից իրենց տրուած քաղցրութիւնը միշտ լեղախառն է, որովհետեւ նրանց անսահմանօրէն մեծ փափաքների դատարկութիւնը չի կարող լցուել վայրկեանատեւ խղճուկ գովասանքներով: Բայց եթէ սիրտս առ Աստուած չուղղուէր առաջին զարթօնքիցս ի վեր, եթէ դէպի կեանք մուտք գործելով միայն ժպիտներ ստանայի աշխարհից ամբողջ, ի՞նչ դարձած կը լինէի այսօր: Ա՛հ, Մայր իմ, ինչպիսի՛ երախտագիտութեամբ եմ գովերգում Տիրոջ ողորմութիւնը: Ինչպէս ասում է Իմաստութեան գիրքը, Նա ինձ «աշխարհից դուրս հանեց, երբ հոգիս դեռ չէր վնասուել նրա չարութիւնից եւ երբ նրա խաբուսիկ պատկերները դեռ չէին մոլորեցրել ու որսացել հոգիս»<sup>1</sup>: Պահպանում էր ինձ նաեւ Ամենասուրբ Կոյսը, որը չէր կամենում որ իր խոնարհ ծաղիկը գունատուէր աշխարհի տապին մնալով: այս իսկ պատճառով շտապեց իր լեռը բարձրացնել նրան առաջ՝ քան այն կը բացուէր: Սպասելով այդ երջանիկ օրուան, փոքրիկ Թերեզան աճում էր, օրէցօր աւելի ու աւելի սիրելով իր Երկնային անուշիկ Մօրը: Ապացուցելու համար այս սէրը, նա մի քայլ կատարեց, որը շատ թանկ արժեք իր համար, եւ որը կը փորձեմ արդ պատմել հակիրճ կերպով, հակառակ իր ծաւալուն իրականութեանը:

125. Վարժարան մտնելուցս գրեթէ անմիջապէս յետոյ, ընդունուել էի Սուրբ Հրեշտակների Ընկերութեան շարքերը: Ինձ շատ հաճելի էին բարեպաշտական այն հրահանգները, որ գործադրում էին այդ ընկերութեան անդամների կողմից, որովհետեւ մի իւրայատուկ հմայք ունէր իմ համար երկնային այդ երանելի հոգիների միջնորդութեամբ աղօթելը, յատկապէս այն մէկի հետ, որին մարդասէրն Աստուած որպէս մտերիմ ուղեկից է տուել ինձ այս աքսորի ճանապարհին<sup>2</sup>: Առաջին Հաղորդութիւնիցս որոշ ժամանակ անց, մեր «Սուրբ Հրեշտակների Ընկերութիւն»ը վերափոխուեց «Մարիամի Որդիներ» Ընկերութեան, բայց ես աւելի վաղ հեռացայ վարժարանից, Սուրբ Կոյսի Ընկերութեան շարքերը դեռեւս չընդգրկուած: Սակայն, ուսումներս վերջացրած չլինելով, չէի կարող անդամագրուել Ընկերութեանը, նոյնիսկ որպէս նախկին աշակերտուհի: Խոստովանում եմ, որ այդ տիտղոսն ինձ չէր գրաւում, բայց մտածելով, որ բոլոր քոյրերս «Մարիամի Որդիներ» էին եղել առանց բացառութեան, վախեցայ՝ որ միգուցէ նրանցից պակաս արժանաւոր դուստր կը լինէի Երկնաւոր Մօրս: Մեծ խոնարհութեամբ գնացի խնդրելու՝ ինձ նոյնպէս ընդունել Սուրբ Կոյսի Ընկերութեան շարքերը: Առաջին Ուսուցչուհին չուզեց մերժել, բայց պայմանով, ըստ որի՝ պարտաւոր էի շաբաթը երկու անգամ վանք յաճախել, ապացուցելու համար՝ որ իրօք արժանի էի ընդունելութեանը: Հաճելի լինելուց բաւական հեռու, այս առանձնաշնորհումն իմ համար թանկ արժեք: Նախկին միւս աշակերտուհիների նման՝ որեւէ մտերիմ ուսուցչուհի չունէի, որի հետ կը կարողանայի հետաքրքիր գրոյցներով լի ժամեր անցկացնել, ուստի եւ բաւարարում էի ուսուցչուհիներին պարզապէս ողջունելով եւ ձեռագործի ամբողջ դասի ընթացքում լուռումուռ աշխատելով: Վրաս ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում եւ ես նախընտրում էի մատրան մէջ՝ Բարձրեալի առջեւ մնալ, մինչեւ հայրիկը կը գար ինձ դէպի տուն ուղեկցելու: Սա էր միակ միսիթարութիւնս, մի՞թէ Յիսուս չէր իմ

<sup>1</sup> Իմ 4, 11

<sup>2</sup> Ի նկատի ունի իր պահապան հրեշտակին:

միակ մտերիմը: Ոչ ոքի հետ չէի կարողանում խօսել, բայց միայն իր գրոյցներն արարածների հետ, նոյնիսկ բարեպաշտ նիւթերի շուրջ խօսակցութիւնները, սպառում էին հոգուս ուժերը: Զգում էի, որ աւելի լաւ է Աստուծոյ հետ խօսել՝ քան Աստուծոյ մասին, որովհետեւ, առանց նկատուելու անգամ, այնքա՛ն անձնասիրութիւն է խառնուում հոգեւոր խօսակցութիւններին: Ա՛հ, միայն Սուրբ Կոյսի համար է, որ գնում էի դպրոց: Երբեմն ինձ միայնակ էի գգում, շա՛տ միայնակ, ինչպէս վարժարանական կեանքիս օրերին: Երբ գբօսնում էի բակում, տխուր ու հիւանդագին, չէի յոգնում կրկնելուց այն խօսքերը, որոնք միշտ էլ խաղաղութիւն եւ ուժ էին ներարկում հոլթեանս մէջ. «Վաղանցուկ այս կեանքը նաւդ է, ոչ թէ տունդ»<sup>1</sup>: Մանուկ հասակիցս ի վեր՝ քաջութիւն էի վերագտնում այս խօսքերում: Եւ այժմ նոյնպէս, թէեւ տարիներն այլեւս անհետ կորուստի են մատնել մանկական բարեպաշտութեան բազմաթիւ տպաւորութիւնները, նաւի պատկերը հմայում է հոգիս եւ օգնում նրան կրելու աքսորը: Իմաստութեան գիրքը նոյնը հաստատում է ասելով. «Կեանքը նման է այն նաւին, որ ճեղքում է խռովայոյզ ալիքները, առանց իր սրընթաց վագրի ետեւում որեւիցէ հետք թողնելու»<sup>2</sup>: Երբ խորհրդածում եմ այս իրողութեան շուրջ, հոգիս ընկղմւում է անսահմանութեան մէջ եւ ինձ թւում է՝ թէ արդէն իսկ հասել եմ յաւիտենական նաւահանդիստ: Թւում է՝ թէ արդէն գրկախառնում եմ Տիրոջս հետ, թէ արդէն տեսնում եմ Երկնային Մօրս, որը գալիս է ինձ դիմաւորելու հայրիկի ... մայրիկի ... չորս հրեշտակների հետ: Թւում է՝ թէ արդէն իսկ վայելում եմ ճշմարիտ, իրական ու յաւիտենական ընտանեկան կեանքը:

126. Բայց նախքան Երկնքի հայրական յարկի տակ ընտանիքս վերամիաւորուած տեսնելը, պէտք է անցնէի բազում բաժանումների բովով: Այն տարին, որում ընդունուեցի «Մարիամի Որդիներ» Ընկերութեան շարքերը, ինձնից յափշտակուեց սիրելի Մարիաս, հոգուս միակ նեցուկը<sup>3</sup>: Մարիան էր, որ առաջնորդում էր ինձ, մխիթարում, օգնում գործադրելու առաքինութիւնները: Անկասկած Փօլինը պահել էր իր մնայուն տեղը սրտիս մէջ, բայց Փօլինը հեռու էր, ինձնից շա՛տ հեռու: Այնքա՛ն էի տառապել՝ առանց նրա ապրելուն վարժուելու համար, հաշտուելու համար իմ եւ իր միջեւ անթափանցելի պատերի գոյութեան հետ. բայց վերջիվերջոյ ընդունել էի տխուր իրականութիւնը: Փօլինը կորած էր իմ համար, չէի կարող հաղորդակցուել իր հետ, գրեթէ այնպէս՝ ինչպէս եթէ մեռած լինէր: Ինձ դեռ սիրում էր, աղօթում էր իմ համար, բայց հոգուս աչքերին այնքա՛ն սիրելի Փօլինս դարձել էր մի Սրբուհի, որը չպէտք է որ այլեւս հասկանար երկրային խնդիրները. ինչպէս նաեւ տկարութիւնները խեղճ Թերեզայի, եթէ նա տեղեկանար դրանց, շատ կը զարմանար, եւ թերեւս դրանք արգելք կը հանդիսանային իրեն, իր փոքրիկ քրոջը սիրելու համար: Միւս կողմից, եթէ նոյնիսկ կամենայի վստահել իրեն մտքերս, ինչպէս Բուխստնէում, չէի կարող, քանի որ խօսարանի մի քանի սրընթաց բոպէները Մարիային էին վերապահուած: Սելինը եւ ես իրաւունք ունէինք խօսելու միայն վերջում ... : Այսպիսով, իրօք միայն Մարիան ունէի, նրա ներկայութիւնն իմ համար անհրաժեշտութիւն էր, միայն իրեն էի պատմում խղճահարութիւններս, եւ այնքան հնազանդ էի, որ խոստովանահայրս անգամ երբեք չիմացաւ սարսափելի հիւանդութեամբ բռնուած լինելս. խոստովանում էի մեղքերի այն քանակը, որոնց համար խոստովանուելու թոյլտուութիւն էի ստանում Մարիայից, ոչ մի հատ աւելի: Հետեւաբար, Մարիան տեղեակ էր հոգուս

<sup>1</sup> Սրբուհին յիշողութեամբ մէջբերում է Լամարթինի հետեւեալ տողը. «Le temps est ton navire, et non pas ta demeure». *Réflexion, Recueils poétiques. Epitres et poésies diverses*, Hachette, 1884.

<sup>2</sup> Իմ 5, 10

<sup>3</sup> Մարիան Լիզեոյի Կարմեղոս մտաւ 1886ի Հոկտ. 15ին, վերցնելով քոյր Մարիա Սուրբ Սրտի անունը:

խորքում կատարուող իրադարձութիւններին, գիտէր նաեւ Կարմեղոս մտնելու փափաքս. եւ ես նրան այնքան էի սիրում, որ առանց իր չէի կարողանում մնալ:

127. Ամէն տարի, մօրեղբօրս կինը մեզ հերթով հրաւիրում էր Թռուվիլ. ես սիրում էի այնտեղ գնալ, բայց Մարիայի հետ: Երբ նա իմ հետ չէր, շատ էի ձանձրանում: Եւ սակայն, մի տարի իմ համար իրօք հաճելի եղաւ Թռուվիլը: Հայրիկի դէպի Կոստանդնուպօլիս կատարած ճամփորդութեան տարին էր<sup>1</sup>: Մեզ մի քիչ սթափում շնորհելու համար (քանի որ շատ էինք տխրել հայրիկի բացակայութեան պատճառով) Մարիան ինձ ու Սելինին երկու շաբաթով ծովափ ուղարկեց: Մօրեղբօրս կինը մեր համար հոգաց հնարաւոր գրեթէ բոլոր գուարճութիւնները. զբօսանք ջորիի վրայ հեծած, ձկնորսութիւն կարթով, եւ այլն: Դեռ բաւական մանուկ էի, հակառակ տասներկուսուկէս տարիներս. յիշում եմ ուրախութիւնս, երբ վարսերս պճնեցի այն կապտաւուն ժապաւէններով, որոնք նոյն օրը նուէր էի ստացել մօրեղբօրս կնոջից: Նաեւ յիշում եմ, որ հէնց Թռուվիլում խոստովանուեցի այդ մանկական հաճոյքը, որն այնժամ ինձ ծանր յանցանք էր թւում: Օգտակար փորձառութիւններ էլ ունեցայ: Մօրեղբօրս աղջիկը յաճախ էր գլխացաւ ունենում եւ արցունքներ հեղում. այդպիսի պահերին, մօրեղբօրս կինը փայփայում էր նրան, քնքշալի անուններ տալիս: Սիրասուն զարմուհիս, սակայն, չնայած այս ամէնին, շարունակում էր լալ ու ճչալ՝ թէ գլխացաւ ունի: Ես, որ գրեթէ ամէն օր գլխացաւ ունէի, բայց երբեք չէի տրտնջում, մի օր ուզեցի նմանուել Մարիամին. այս նպատակի համար ինձ պարտաւորուած զգացի արցունքներ հեղելու, հիւրասենեակի անկիւններից մէկում գտնուող բազկաթոռի վրայ: Իսկոյն իմ մօտ փութացին մօրեղբօրս կինն ու մեծ զարմուհիս՝ Յովհաննան. «Ի՞նչ է պատահել»: «Գլուխս է ցաւում»: Չհաւատացին, սակայն, որ գլխացաւն էր արտասուելուս պատճառը, եւ այդպէս էլ չկարողացայ նրանց համոզել, որ անկեղծ էի իրենց հետ: Փայփայելու փոխարէն, հետս խօսեցին ինչպէս մեծահասակ անձի հետ, իսկ Յովհաննան նոյնիսկ յանդիմանեց, ասելով՝ որ թերանում էի մօրեղբօրս կնոջ հանդէպ վստահութեան մէջ. որովհետեւ կարծում էին՝ թէ խղճահարութիւններն էին լացիս բուն պատճառը: Մի խօսքով, ձախողումս փորձառութեան առիթ եղաւ եւ առաջադրեցի այդուհետեւ չտարուել ուրիշներին նմանուելու ցանկութիւնից: Ինչպէս նաեւ հասկացայ «Աւանակի եւ շնիկի» առակը<sup>2</sup>: Ես էի այդ աւանակը, որը տեսնելով շնիկին շռայլուած գուրգուրանքները, իր տձեւ սմբակը սեղանին էր դրել, յուսալով ընդունել համբոյրների իրեն հասանելիք բաժինը: Բայց աւա՛ղ. եթէ խեղճ կենդանու նման դուրս չվճնդուեցի գաւազանի հարուածների տակ, ապա լիովին վարձատրուեցի արարքիս համար, եւ այդ վարձատրութիւնն ինձ մէկընդմիջտ բժշկեց անձիս վրայ ուշադրութիւն գրաւելու փափաքից: Այդ նպատակով գործադրած միակ ջանքս իմ համար խիստ թանկ արժեց:

Յաջորդ տարի, այսինքն այն տարին՝ որում սիրելի Կնքամայրս հեռացաւ տնից, մօրեղբօրս կինը եւս մի անգամ հրաւիրեց Թռուվիլ, բայց այս անգամ միայն ինձ: Այնքան աքսորուած զգացի ինձ, որ երկու կամ երեք օրերի ընթացքում հիւանդ մնացի, այնպէս՝ որ անհրաժեշտ եղաւ ինձ Լիզէոյ վերադարձնել<sup>3</sup>. վախենում էին, որ միգուցէ կրկին ծանր հիւանդութիւն է, բայց իրականում Բուխսոնէի կարօտն էր: Հագիւ ոտքս տուն դրի, առողջութիւնս վերականգնուեց: Եւ այդ փոքրիկ մանկիկն էր, որից Աստուած կամենում էր խլել կեանքի միակ նեցուկը:

<sup>1</sup> Պրն. Մարթինը Լիզէոյից մեկնեց 1885ի Օգոստոսի վերջերին: Թերեզայի եւ Սելինի հիւրընկալումը Թռուվիլում, հետեւաբար, պէտք է տեղի ունեցած լինի Սեպտեմբերին:

<sup>2</sup> LA FONTAINE, *Fables*, 1.4.5.

<sup>3</sup> Այս կարճատեւ արձակուրդը տեղի ունեցաւ 1886ի Յուլիսին:

128. Երբ տեղեկացայ Մարիայի որոշմանը<sup>1</sup>, առաջադրեցի այլևս ոչ մի հաճոյք կամ սիրտանք չունենալ այս երկրում: Այն ժամանակից ի վեր, ինչ դուրս էի եկել վարժարանից, գետեղել էի ինձ Փօլինի նախկին նկարչական սենեակում<sup>2</sup>, որը կահավորել էի ճաշակիս համաձայն: Իրական շուկայ էր, հետաքրքրաշարժ ու խղճալի իրերի հաւաքածոյ, պարտէզ ու թռչնանոց: Այսպիսով, պատուհանն իր մէջ ներառնող պատի վրայ կախուած էին սեւ փայտից պատրաստուած, բայց առանց Քրիստոսի մի մեծ խաչ եւ ինձ հաճելի մի քանի նկարներ: Միւս պատի վրայ ամրացուած էր մի կաւէ ծաղկաման, նուրբ խոտերով ու ծաղիկներով: Չորրորդ պատի վրայ միայնակ իշխում էր Փօլինի նկարներից մէկը, տասնամեայ հասակում: Այդ նկարի ներքեւում մի սեղան կար, որի վրայ տեղադրել էի մի ընդարձակ վանդակ, բազմաթիւ փոքրիկ թռչնակներով, որոնք իրենց երաժշտական ճոռուղիներով գլխացաւ էին պատճառում այցելուներին, բայց ոչ երբեք իրենց տիրուհուն, որն իրենց շատ էր սիրում: Այնտեղ էր նաեւ սպիտակ պահարանը, լի՝ դպրոցական գրքերով, տետրակներով, եւ այլն: Այդ փոքրիկ պահարանի վրայ էի տեղադրել Սուրբ Կոյսի արձանիկը, միշտ բնական ծաղիկներով լի ծաղկամաններով ու մոմակալներով զարդարուած եւ շրջապատուած ուրիշ Սրբերի ու Սրբուհիների աւելի փոքրադիր արձանիկներով: ոստրէներով շինուած փոքրիկ կողովներ, ստուարաթղթէ տուփիկներ եւ այլն: Վերջապէս պարտէզս, որ կախուած էր պատուհանի առջեւ, ուր թաղարների մէջ խնամում էի այն ամենահազուագիւտ ծաղիկները, որ կարողանում էի գտնել: Դեռ մի փոքրիկ պարտէզ էլ «Թանգարանիս» ներսում ունէի, ուր պահում էի նախասիրածս բոյսը: Պատուհանի առջեւ էր գտնուում կանաչ սփռոցով ծածկուած սեղանս, որի ճիշտ կենտրոնում դրել էի մի ջրի ժամացոյց, Սուրբ Յովսէփի արձանիկը, մի ծաղկաման, մի թանաքաման, եւ այլն: Մի քանի կաղ աթոռներն ու Փօլինի տիկնիկին յատկացուած անկողինը լրացնում էին սենեակիս ամբողջ կահկարասին: Իրօք, այդ սենեակը մի առանձին աշխարհ էր իմ համար, եւ պարոն Դը Մէսթրը մեծ յաջողութեամբ կարող էր գիրք գրել այնտեղ, անուանելով «Ճամփորդութիւն սենեակիս ներսում»: Այս փոքրիկ տարածքում փակուում էի ժամեր ու ժամեր, սովորելով եւ մտածելով այն գեղատեսիլ բնապատկերի թողած ներշնչման ազդեցութեամբ, որը տարածւում էր սենեակիս առջեւ:

129. Երբ Մարիայի մեկնման օրը մօտեցաւ, սենեակս կորցրեց իր ամբողջ հմայքը, չէի կարողանում գէթ մի պահ հեռանալ սիրելի քրոջս մօտից, որը շուտով մէկընդմիշտ հեռանալու էր մեզնից: Համբերութիւն գործադրելու քանի՛ քանի՛ առիթներ տուեցի նրան: Իր սենեակի դռան մօտով ամէն անգամ անցնելուս բախում էի եւ սպասում մինչեւ որ բացի, ապա գրկում էի նրան ամբողջ ուժով, կամենում էի համբոյրների պաշար հաւաքել այն ամբողջ ժամանակուայ համար, որ նրան չէի տեսնելու: Մարիայի Կարմեղոս մտնելուց մի ամիս առաջ հայրիկը մեզ կրկին Ալանսոն տարաւ, բայց այս ճամփորդութիւնն արդէն բաւական հեռու էր առաջինին նմանուելուց. ամէն բան իմ համար թախիծ էր ու դառնութիւն: Չեմ կարող խօսքերով նկարագրել՝ թէ որքան արցունք հոսեց մայրիկի գերեզմանի առաջ, որովհետեւ մոռացել էի շուշանների ծաղկեփունջ տանել իր համար: Վշտանում էի ամէն ինչի համար: Այժմուայ ճիշտ հակառակն էի. այժմուայ, որովհետեւ մարդասէրն Աստուած տուեց ինձ մի շնորհ, որի օգնութեամբ չեմ կապնում անցողիկ իրերին եւ չեմ պայքարում դրանք ձեռքբերելու համար: Երբ յիշում եմ անցեալը, հոգիս

<sup>1</sup> Ամենայն հաւանականութեամբ նոյն Յուլիսին, Թուրքիից վերադարձին է, որ Թերեզային յայտնում են Մարիայի որոշումը:

<sup>2</sup> Երրորդ յարկի սենեակներից մէկն էր, որի պատուհանները բացւում էին դէպի պարտէզ, մի քիչ աւելի հեռուում ունենալով "de l'Etoile" ծառուղու գեղեցիկ տեսարանը:

երախտագիտութեամբ է լցուում, որովհետեւ տեսնում եմ այն բոլոր շնորհները, որ ստացայ Երկնքից եւ որոնք այնպէս կերպարանափոխեցին ինձ, որ այլեւս անճանաչելի եմ դարձել: Եւ իրօք կամենում էի ստանալ այդ շնորհները, որոնց զինակցութեամբ «լիակատար տիրապետութիւն կ'ունենայի գործերիս վրայ, ձգտումներիս տիրուհին կը լինէի, եւ ոչ երբեք ստրկուհին»<sup>1</sup>: Նմանութեան գրքի այս խօսքերը ալեկոծում էին հոգիս, բայց ես դե'ռ պէտք է ձեռք բերէի, գրեթէ իմ վիթխարի փափաքներով միայն, այդ անգին շնորհը: Տակաւին մանուկ էի, որը թուում է՝ թէ ուրիշ փափաք չունէր, եթէ ոչ միայն՝ ուրիշների կամքի կատարումը: Եւ սա Ալանսոնի ծանօթ անձանց տեղի էր տալիս ասելու՝ թէ կամքից թոյլ էի:

130. Այս ճամփորդութեան ընթացքում էր, որ Լէոնիան Քլարիսների վանքը մտնելով կրօնաւորուհի դառնալու փորձ կատարեց<sup>2</sup>: Ինձ մեծ տհաճութիւն պատճառեց այդ տարօրինակ մոլտքը, որովհետեւ շատ էի սիրում նրան եւ չէի կարողացել վերջին համբոյրս տալ մեկնումից առաջ:

Երբեք չեմ մոռանայ սիրելի հօրս միաժամանակ բարութիւնն ու վիշտը, երբ մեզ յայտնեց, որ Լէոնիան Քլարիսների զգեստն է արդէն հագնում: Ինչպէս մենք, նա նոյնպէս շատ տարօրինակ էր գտնում կատարուածը, բայց չէր ասում ոչինչ, տեսնելով՝ թէ որքան դժգոհ էր Մարիան: Մեզ դէպի վանք առաջնորդեց, ուր սիրտս յանկարծ սկսեց ճմլուել, մի բան՝ որ մինչ այդ չէր պատահել ոչ մի վանքում. զգացումներս Կարմեղոսի հանդէպ տածածներս ճիշտ հակառակն էին, ուր ամէն ինչ ընդարձակում էր սիրտս: Միանձնուհիներին տեսնելն ինձ ոչինչ չասաց եւ նրանց շարքերն ընդգրկուելու միտքն անգամ չունեցայ: Ինչ, սակայն, վերաբերում է Լէոնիային, յիրաւի գեղեցիկ էր իր նոր հանդերձանքով. շարունակ պատուիրում էր մեզ նայել իր աչքերին, որովհետեւ շուտով այլեւս երբեք չէինք կարողանալու տեսնել դրանք (Քլարիսները խօսելիս դէպի վար են խոնարհում իրենց հայեացքները): Բայց մարդասէրն Աստուած գոհացաւ միայն երկու ամսուայ զոհողութեամբ եւ Լէոնիան վերադարձաւ ցուցադրելու մեզ իր գեղեցիկ երկնագոյն աչքերը, որոնք յաճախ էին արցունքներով ողողում:

Հոկտեմբերի 15ը եղաւ բաժանման օրը: Բուխսոնէի կենսուրախ ու մարդաշատ ընտանիքում մնում էին միայն վերջին երկուսը: Աղանիները հեռացել էին հայրական բնից. նրանք, որ մնացել էին, անձկագին փափաքում էին ճախրել միւսների նման, բայց նրանց թեւերը դեռ շատ տկար էին թռիչք առնելու համար:

Մարդասէրն Աստուած, որ կամենում էր իր մօտ կանչել նրանցից ամենափոքրին ու ամենատկարին, շտապեց ամրացնել նրա թեւերը: Նա, որ իր բարութիւնն ու զօրութիւնը ակներեւ դարձնելու համար օգտագործում է նուաստ գործիքներ, որոշեց կանչել ինձ Սելինից առաջ, որն անկասկած ինձնից աւելի արժանի էր ստանալու այդ շնորհը. բայց Յիսուս գիտէր՝ թէ որքան տկար էի, այս իսկ պատճառով՝ ուզեց նախեւառաջ ինձ թաքցնել ժայռի խողոցում<sup>3</sup>:

131. Երբ Մարիան Կարմեղոս մտաւ, դեռ բաւական տառապում էի խղճահարութիւններիս ձեռքում: Այլեւս չկարողանալով խօսակցել իր հետ, հայեացքս

<sup>1</sup> Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, ԼԸ 1

<sup>2</sup> Դա տեղի ունեցաւ 1886ի Հոկտ. 7ին: Լէոնիան Պրն. Մարթինի հետ այցելել էր Քլարիս մայրապետներին, որոնց ճանաչում էր մանկուց ի վեր: Յուցաբերելով վանք մտնելու աշխոյժ փափաք, միանձնուհիներն ընդունել էին նրան իրենց շարքերը: Չափազանց տկար գտնուելով, սակայն, տուեալ միաբանութեան խստաշունչ օրէնքների դիմաց, այնտեղից դուրս եկաւ նոյն տարուայ Դեկտ. 1ին:

<sup>3</sup> Հմմտ. Երգ 2, 14; Ել 33, 22

դէպի Երկինք յառեցի: Դիմեցի այն չորս հրեշտակներին, որոնք ինձնից առաջ հեռացել էին երկրից, որովհետեւ խորհում էի՝ որ այդ անմեղ հոգիները, որոնք երբեւէ չէին ենթարկուել երկրի փոթորիկներին ու սարսափներին, պարտաւոր էին խղճալ իրենց փոքրիկ քրոջը, որ չարչարուում էր երկրի վրայ: Խօսեցի նրանց հետ մանկական պարզութեամբ, իրենց ուշադրութեանը ներկայացրի այն հանգամանքը, որ ընտանիքի ամենափոքրը լինելով՝ միշտ ամենասիրուածն էի եւ քոյրերիս կողմից ամենաշատ փայփայուածը: Եւ եթէ իրենք նոյնպէս մնացած լինէին երկրի վրայ, անշուշտ թէ միեւնոյն սէրը կ'ունենային իմ նկատմամբ: Իրենց դէպի Երկինք մեկնումը ինձ մոռանալու բաւարար պատճառ չէր թւում ինձ. աւելին՝ աստուածային գանձերին առաւել մօտ գտնուելով, պէտք է իմ համար խաղաղութիւն ստանային եւ այսպիսով ապացուցէին, որ Երկնքում դեռ գիտեն սիրել: Պատասխանը չստիպեց սպասել. շուտով խաղաղութիւնը ողողեց հոգիս իր քաղցր ալիքներով, եւ հասկացայ՝ որ եթէ սիրուած էի երկրի վրայ, այդպիսին էի նաեւ Երկնքում: Այդ օրուանից, ջերմեռանդութիւնս աւելացաւ եղբայրներիս ու քոյրերիս հանդէպ, եւ իմ համար հաճելի է նրանց հետ զրուցելը, խօսելով այս աքսորի տրամութեան ու ձանձրոյթի շուրջ ... երկնային Հայրենիքում նրանց շուտով միանալու փափաքիս շուրջ:

## 5. ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆԸ (1886–1887)

1886 թուականի Սբ. ԾՆՆդեան շնորհը – Հոգիներ փրկելու եռանդն ու առաջին արդիւնքը – Հրապուրուելը պատմութեամբ ու գիտութիւններով – Բարեպաշտ ընթերցումները – Մտերմութիւնը Սելինի հետ – 15 տարեկանում Կարմեղոս մտնելու փափաքը – Հօր համաձայնութիւնը – Խոչընդոտներ Գերէն մօրեղբօր եւ վանքի խոստովանափոր կողմից – Ապարդիւն փորձը Բէլէոյի Եպիսկոպոսի մօտ

132. Բայց եթէ Երկիրքն ինձ ճոխացնում էր շնորհներով, ես ինքս շատ հեռու էի դրանց արժանի լինելուց, դեռ այնքա՛ն անկատար էի: Առաքինութիւններ գործադրելու մեծ կամք ունէի, ճիշտ է, բայց կատարում էի դրանք մի խեղաթիւր կերպով, ահա մի օրինակ. քանի որ ընտանիքի փոքրն էի, վարժուած չէի ինքս ինձ ծառայելու, Սելինը կարգուկանոնի էր բերում մեր ննջասենեակը, եւ ես չէի զբաղւում տնային ոչ մի գործով: Մարիայի Կարմեղոս մտնելուց յետոյ երբեմն պատահում էր, որ Աստծուն հաճոյք պատճառելու համար հաւաքում էի անկողինս, կամ, Սելինի բացակայութեան դէպքում, երեկոյեան ներս էի բերում իր ծաղկամանները: Ինչպէս ասացի, միմիայն Աստծոյ համար է, որ կատարում էի այդ գործերը, հետեւաբար՝ չպէտք է սպասէի արարածների շնորհակալութեանը: Աւա՛ղ: Իրականում ճիշտ հակառակն էր ստացւում. եթէ յանկարծ Սելինը երջանիկ ու զարմացած տեսք չէր ունենում իմ փոքրիկ ծառայութիւնների դիմաց, գոհ չէի լինում, եւ դժգոհութիւնս արտայայտում էի արցունքներով: Իրօք անտանելի էի, չափազանց զգացմունքայնութեանս պատճառով: Այսպիսով, եթէ ինձ պատահում էր ակամայ տհաճութիւն պատճառել որեւէ մէկին, որին սիրում էի, սկսում էի լալ ինչպէս մի Մագդաղենացի, իսկ երբ փորձում էի մխիթարել ինքս ինձ եւ համոզել, որ կատարուածը կամովին չէր, լալիս էի արտասուած լինելուս համար: Բոլոր խորհրդածումներն ապարդիւն էին եւ չէի կարողանում ուղղել այս տձեւ թերութիւնս:

133. Չգիտեմ՝ թէ ինչպէս էի կարողանում Կարմեղոս շուտով մտնելու յոյսը փայփայել, երբ դեռ մանկական օրօրոցի մէջ էի տեսնում ինքս ինձ: Պէտք է Աստուած մի փոքրիկ հրաշք կատարէր, ինձ մի ըրպէնով մեծացնելու համար, եւ այդ հրաշքը Նա կատարեց Սուրբ Ծննդեան անմոռանալի օրը<sup>1</sup>. այդ լուսաւոր գիշերուայ ընթացքում, որ կազմում է Ամենասուրբ Երրորդութեան բերկրանքը, Յիսուս, մէկժամեայ այդ փոքրիկ ու անուշիկ Մանկիկը, իմ հոգու խաւարը նոյնպէս լուսանիւթ հեղեղի վերածեց: Այն գիշեր, որում ինքը տկար եւ տառապանքներին ենթակայ դարձաւ իմ սիրոյ համար, ինձ հզօր ու քաջարի դարձրեց, ինձ իր իսկ գէնքերով պատեց, եւ այդ օրհնեալ գիշերից յետոյ չպարտուեցի այլեւս ոչ մի պատերազմում, աւելին՝ յառաջ ընթացայ յաղթանակ առ յաղթանակ, եւ սկսեցի – այսպէս ասելու համար – «հսկային վայել ընթացք»<sup>2</sup>: Արցունքներիս աղբիւրը չորացաւ եւ այլեւս չբացուեց, եթէ ոչ միայն՝ շատ հազուադէպ ու մեծ դժուարութեամբ, եւ այսպիսով արդարացաւ այն խօսքը, որ ասել էին ինձ. «Այնքան շատ ես արտասուում մանկութեանդ տարիներին, որ հետագայում հեղելիք արցունքներ այլեւս չես ունենալու»:

1886ի Դեկտ. 25ին էր, որ ստացայ մանկութիւնից դուրս գալու շնորհը, մի խօսքով՝ կատարեալ դարձիս շնորհը: Վերադառնում էինք կէսգիշերի Պատարագից,

<sup>1</sup> 1886ի Դեկտ. 24 լոյս 25ի գիշերը, ուրբաթ:

<sup>2</sup> Սղմ 18, 6

որի ընթացքում հաղորդուել էի հզոր ու ամենակարող Աստծուն: Բուխոնէ հասնելով ուրախանում էի, որովհետեւ քիչ անց մօտենալու էի վառարանին եւ ծխնելոյգից դուրս էի հանելու քաղցրեղէններով լի կօշիկներս: Այս աւանդական զուարճութիւնը այնքան ուրախութիւններ էր պարգեւել մեզ մեր մանկութեան տարիներին, որ Սելինը կամենում էր դեռ պահպանել այն, իմ համար, որ ընտանիքի փոքրն էի: Հայրիկին հաճելի էր ինձ երջանիկ տեսնելը, ուրախութեանս աղաղակները լսելը, մինչ հերթով նորանոր անակնկալներ էի դուրս քաշում իմ «կախարդական կօշիկներից», եւ սիրելի թագաւորիս բերկրանքն է՛լ աւելի էր մեծացնում գոհունակութիւնս: Բայց Յիսուս, կամենալով ցոյց տալ, որ պարտաւոր էի այլեւս ազատուել մանկական թերութիւններից, հեռացրեց ինձնից նրա անմեղ զուարճութիւններն անգամ: Թոյլատրեց, որ հայրիկը, կէսգիշերի Պատարագից յոգնած, մի տեսակ ձանձրոյթ զգայ, տեսնելով կօշիկներս վառարանում կախուած, եւ ասի խօսքեր, որոնք ցաւագին խոցեցին սիրտս. «Յուսանք վերջին տարին լինի»: Այդ պահին ես աստիճաններով վեր էի բարձրանում, սենեակս գնալու համար. Սելինը, ճանաչելով զգացմունքայնութիւնս եւ արցունքներ նշմարելով աչքերիս մէջ, իր արտասուքները նոյնպէս խառնեց իմոնց, որովհետեւ ինձ շատ էր սիրում եւ լաւ հասկանում էր զգացածս տհաճութիւնը: «Ա՛հ, Թերեզա, – ասաց, – իսկոյն վար մի՛ իջիր, շատ կ'արտասուես՝ կօշիկներդ անմիջապէս տեսնելով»: Բայց Թերեզան այլեւս նոյնը չէր, Յիսուս փոխել էր նրա սիրտը: Արցունքներս զսպելով, իսկոյն վար իջայ եւ սրտիս բաբախումները ճնշելով՝ վերցրի կօշիկները, նստեցի հայրիկի դիմաց եւ սկսեցի ուրախ ուրախ դուրս հանել բոլոր առարկաները. տեսքով կարծես երանելի թագուհի լինէի: Հայրիկը ծիծաղում էր, կրկին զուարթացել էր, իսկ Սելինն իրեն երագում էր կարծում: Բարեբախտաբար, քաղցր իրականութիւն էր. փոքրիկ Թերեզան վերագտել էր հոգու զօրութիւնը, որը կորցրել էր չորսուկէս տարեկան հասակում եւ որն այդուհետեւ պահպանելու էր ընդմիշտ:

134. Այդ լուսաւոր գիշերով սկսուեց կեանքիս երրորդ շրջանը, ամենագեղեցիկը, երկնային շնորհներով ամենալեցունը: Այն՝ որ չէի կարողացել իրագործել տասը տարիների ընթացքում, Յիսուս ի կատար ածեց մէկ վայրկեանում, բարի կամքովս միայն գոհանալով, որն երբեք չպակասեց ինձ: Ինչպէս իր առաքեալները, ես նոյնպէս կարող էի ասել. «Տէր, չարչարուեցի ամբողջ գիշեր, բայց ոչինչ էլ չբռնեցի»<sup>1</sup>: Դե՛ռ աւելի ողորմած գտնուելով իմ հանդէպ՝ քան իր առաքեալների, Յիսուս ինքը վերցրեց ցանցը, նստեց եւ դուրս քաշեց ձկներով լի: Ինձ մարդկանց որսորդ դարձրեց, մեծ ծարաւ զգացի աշխատելու մեղաւորների դարձի համար, ծարաւ՝ որ մինչ այդ չէի զգացել այդքան բուռն կերպով: Զգացի, որ սէրը լցւում էր սրտիս մէջ, ստիպելով մոռանալ ինքս ինձ, ուրիշներին ծառայելու համար. այդ օրուանից այլեւս երջանիկ դարձայ: Մի կիրակի, մինչ դիտում էի մեր Տիրոջը խաչի վրայ պատկերող նկարներից մէկը, սիրտս խոցուեց ի տես այն արեան, որ հոսում էր նրա աստուածային ձեռքից. մեծ ցաւ զգացի մտածելով, որ այդ արիւնը թափւում էր հողին եւ ոչ ոք չէր շտապում հաւաքել այն: Առաջադրեցի մտովին միշտ Խաչի ստորոտում մնալ, աստուածային փրկութեան ցօղը ստանալու համար, լաւ հասկանալով, որ հետագայում այն պարտաւոր էի հոգիների վրայ սփռել: Մահամերձ Յիսուսի աղաղակը շարունակ արձագանքում էր սրտիս խորքում. «Ծարաւի եմ»<sup>2</sup>: Այս խօսքերը հոգուս խառնարանում նոր եւ բուռն եռանդ էին արծարծում: Ուզում էի յագեցնել Սիրելիիս ծարաւը, բայց միեւնոյն ժամանակ ինքս ինձ էի սպառուած տեսնում հոգիների ծարաւից: Դեռեւս քահանաների հոգիները չէին, որ գրաւում էին

<sup>1</sup> ՂԿ 5, 5

<sup>2</sup> ՅՎՏ 19, 28

ինձ, այլ՝ հոգիները մեծ մեղաւորները. այրուժ էի յաւիտենական կրակներից նրանց դուրս կորզելու փափաքից:

135. Եռանդս է՛լ աւելի բորբոքելու համար Աստուած յայտնեց, որ փափաքներս հաճելի էին իրեն: Լսեցի մի մեծ ոճրագործի մասին, որը մահուան էր դատապարտուել զարհուրելի սպանութիւնների համար<sup>1</sup>. Հաղորդագրութիւններն այնպիսի տպաւորութիւն էին թողնում, որ պատրաստուում էր մեռնել առանց խոստովանուելու, առանց զղջման: Կամեցայ ամէն գնով փրկել նրան դժոխակործան ճանապարհից եւ այս նպատակիս իրագործման համար օգտագործեցի հնարաւոր բոլոր միջոցները: Շատ լաւ հասկանալով, որ ես ինքս ոչինչ էլ չէի կարող անել, ամենագուց Հայր Աստուծոն նուիրեցի մեր Տիրոջ անսահման արժանիքները, Սուրբ Եկեղեցու գանձերը<sup>2</sup>, ինչպէս նաեւ Սելինին պատուիրեցի Պատարագ խնդրել իմ դիտաւորութեան համաձայն, որովհետեւ ես ինքս քահանայից խնդրել չէի համարձակուում, վախենալով որ ստիպուած կը լինէի խոստովանել, որ Փրանցիինի մեծ յանցագործի համար էր: Չէի կամենում յայտնել այն եւ ոչ իսկ Սելինին, բայց նա այնպիսի նրբին ու բարեպաշտ հարցումներ ուղղեց ինձ, որ չկարողացայ լռել եւ իրեն վստահեցի գաղտնիքս: Ծաղրելուց բաւական հեռու, խնդրեց թոյլատրել օգնել ինձ, մեղաւորիս դարձի բերելու գործում: Ընդունեցի երախտագիտութեամբ, որովհետեւ կամենում էի, որ աշխարհն ամբողջ աղօթքով ինձ միանար եւ շնորհ խնդրէր յանցագործի համար: Սրտիս խորքում զգում էի մեծ վստահութիւն, որ աղօթքներս ընդունուելու էին: Ինքս ինձ քաջալերելու եւ մեղաւորների համար աղօթել շարունակելու համար, ասացի մարդասէրն Աստուծոն, որ վստահ էի իր մեծ ողորմութեան հանդէպ եւ որ թշուառ Փրանցիինի փրկութեանը հաւատալու էի, եթէ վերջինս չխոստովանուէր անգամ եւ չտար զղջման ոչ մի նշան: Այդքան մեծ էր վստահութիւնս Յիսուսի անսահման ողորմութեան հանդէպ, բայց եւ այնպէս՝ խնդրում էի Նրանից զղջման միայն «մի նշան», պարզապէս միտիթարուելու համար: Աղօթքս ընդունուեց բառ առ բառ: Թէեւ հայրիկը արգելել էր մեզ լրագրեր կարդալ, անհնազանդութիւն չհամարեցի Փրանցիինի մասին տրուող նորութիւնների ընթերցումը: Դատավճռի գործադրման յաջորդ օրը ձեռքս վերցրի «La Croix» թերթը, անհամբերութեամբ բացեցի, եւ ի՛նչ տեսնեմ ... : Ա՛հ, արցունքներս մատնեցին զգացումներս եւ ստիպուած եղայ սենեակ փախչել: Փրանցիինին չէր խոստովանուել, գլխատման բեմահարթակ էր բարձրացել եւ արդէն պատրաստուել էր գլուխը ահագու դանակին ներկայացնել, երբ յանկարծակի, մի անակնկալ ներշնչումից ցնցուած, դէպի ետ էր շրջուել, ձեռքերով բռնել քահանայի կողմից իրեն ներկայացուող Խաչելութիւնը եւ համբուրել էր աստուածային վէրքերը երեք անգամ: Ապա նրա հոգին գնացել էր ընդունելու ողորմած դատավճիռը Նրա՝ ով ասում է. «Աւելի մեծ ուրախութիւն կը լինի երկնքում մի մեղաւորի համար, որ ապաշխարում է, քան իննսունինը արդարների համար, որոնք ապաշխարութեան կարիք չունեն»<sup>3</sup>:

136. Ուրեմն ստացել էի խնդրածս «նշանը», եւ այդ նշանը իրական կրկնօրինակն էր Յիսուսի շնորհների, որոնցով ինձ կանչել էր մեղաւորների դարձի համար կատարուող հմայիչ աղօթքին: Մի՞թէ Յիսուսի վէրքերի առաջ չէր, Նրա

<sup>1</sup> Այդ յանցագործը (Փրանցիինի) երեք սպանութիւն էր գործել Մարտ 16 լոյս 17ի գիշերը: Գիլիոտինի դատապարտուելով Յուլիսի 13ին, մահապատիժը կրեց Օգոստ. 31ին:

<sup>2</sup> «Սուրբ Եկեղեցու Գանձեր» ասելով հասկանում ենք Սրբերի աղօթքները, մատուցուող Սուրբ Պատարագները, մենակեացների ճգնութիւնները եւ այլն, որոնք նուիրուում են Աստուծոն հոգիների փրկութեան համար:

<sup>3</sup> Ղկա 15, 7

աստուածային Արեան հեղմանն ի տես, որ հոգիների ծարաւը մոտք էր գործել սրտիս մէջ: Կամենում էի նրանց ծարաւը յագեցնել այդ անարատ Արիւնով, ո՛րը միայն կարող էր մաքրել նրանց հոգիների աղտերը. եւ «իմ առաջին որդու» շուրթերը նոյնպէս գնացել էին հանգչելու այդ սուրբ վէրքերի վրայ: Ի՛նչ քաղցր պատասխան: Ա՛հ, այդ միակ շնորհից յետոյ, հոգիներ փրկելու ծարաւս օրէցօր աճեց. թւում էր՝ թէ լսում էի Յիսուսի ձայնը, որ ասում էր ինձ, ինչպէս երբեմն Սամարացի կնոջը. «Ինձ խմելու ջուր տուր»<sup>1</sup>: Դա սիրոյ իրական փոխանակութիւն էր. հոգիներին էի բաշխում Յիսուսի Արիւնը, իսկ Յիսուսին տալիս էի նոյն այդ հոգիները, որոնք այլեւս գովացած էին լինում աստուածային ցօղով: Թւում էր ինձ, որ այդպիսով իրօք յագեցնում էի Նրա ծարաւը, եւ որքան աւելի էի Նրան խմելու ջուր տալիս, այնքան աւելի էր սաստկանում խեղճ հոգուս պապակը. այդ բոցավառ ծարաւն էր, որ Նա տալիս էր ինձ որպէս աստուածային սիրոյ քաղցր ըմպելի:

137. Կարճ ժամանակի ընթացքում Աստուած դուրս էր քաշել ինձ կեանքիս նեղ շրջանակից, որի սահմաններից ներս պտտում էի առանց դուրս գալ կարողանալու: Անցածս ճանապարհը տեսնելով, երախտագիտութիւնս վիթխարիօրէն մեծ էր, բայց եթէ կարեւորագոյն քայլը կատարուած էր, պէտք է ընդունեմ, որ դեռ շատ բաներ կային, որոնցից պէտք է ձերբազատուէի: Խղճահարուցիչներից ու չափազանց զգացմունքայնութիւնից ազատուելով, հոգիս ընդարձակուեց: Միշտ էլ սիրել էի մեծը, գեղեցիկը. իսկ այդ օրերին բռնուեցի իմանալու ծայրայեղ տենչով: Ուսուցչուհուս տուած դասերով ու առաջադրանքներով չգոհացած, ինքնուրոյն կերպով զբաղւում էի պատմութեան եւ գիտութիւնների իւրայատուկ ուսումնասիրութեամբ: Միւս դասերի հանդէպ անտարբեր էի, բայց այս երկուսը գրաւել էին գրեթէ ամբողջ ուշադրութիւնս: Այսպիսով, մի քանի ամսուայ ընթացքում աւելի շատ սովորեցի՝ քան դպրոցական բոլոր տարիների ընթացքում ի միասին: Աւա՛ղ, ուրիշ բան չէր, եթէ ոչ միայն՝ ունայնութիւն եւ հոգու տառապանք<sup>2</sup>: Նմանութեան գրքի այն գլուխը, ուր խօսւում է գիտութիւնների մասին<sup>3</sup>, յաճախ էր խոյանում մտքիս առաջ, բայց ես գտնում էի ուսումնասիրութիւններս հաւասարապէս շարունակելու միջոցը, եւ համոզում էի ինքս ինձ, որ սովորելու տարիքում գտնուելով, ոչ մի վատ բան չկար դրանում: Յուսով եմ, որ չեմ վշտացրել մարդասէրն Աստծուն (թէեւ խոստովանում եմ դրանց վրայ ապարդիւն ժամանակ ծախսած լինելուս փաստը), որովհետեւ այդ ուսումներին տրամադրում էի խիստ սահմանափակ ժամեր, մահացնելու համար իմանալու չափազանց կենդանի ցանկութիւնս: Պատանի աղջիկների համար ամենավտանգաւոր տարիքում էի գտնում, բայց Աստուած իմ հետ այնպէս վարուեց, ինչպէս նկարագրում է Եզեկիէլը իր մարգարէութիւններում. «Մօտովս անցնելով, Յիսուս տեսաւ, որ սիրոյ ժամանակս հասել էր. Նա ուխտ կնքեց իմ հետ եւ ես եղայ Իրենը: Իմ վրայ տարածեց Իր պաշտպանութիւնը, լուաց ինձ թանկարժէք օծանելիքներով, ասեղնագործ գգեստներ հագցրեց ինձ եւ զարդարեց ինձ օղբով ու անգին ապարանջաններով: Մնուցեց ինձ գտուած ալիւրով, մեղրով ու իւղով առատօրէն: Այնժամ գեղեցիկ երեւացի Իր աչքերին եւ Նա ինձ հօր թագուհի դարձրեց»<sup>4</sup>:

138. Այո՛, Յիսուս այս բոլորը կատարեց իմ համար: Կարող էի մի առ մի վերցնել մարգարէից մէջբերուած խօսքերից իւրաքանչիւրը եւ փաստել, որ

<sup>1</sup> Եզկ 4, 7

<sup>2</sup> Ժող 2, 11

<sup>3</sup> Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, ԽԳ

<sup>4</sup> Եզկ 16, 8-13

իրականացել են ի նպաստ իմ, բայց այն շնորհները, որ արդեն իսկ պատմել եմ, բաւարար հիմք են ասածիս համար: Կը խօսեմ միայն այն սննդի մասին, որը շուայլուեց ինձ «առատօրէն»: Վաղուց ի վեր սնուում էի «գտուած ալիւրով», որը գտնուում էի Նմանութեան գրքում: միակ գիրքն էր, որ օգնում էր ինձ, քանի դեռ չէի գտել Աւետարանի թաքնուած գանձերը: Անգիր գիտէի այդ փոքրիկ գրքի գրեթէ բոլոր գլուխները, այն երբեք չէր լքում ինձ: ամուսնը գրպանուում էր, ձմուսնը՝ պայուսակիս մէջ, այնպէս՝ որ այլեւս աւանդական էր դարձել: Մօրեղբօրս տանը նրանով շատ էինք զբաղուում, պատահաբար բացելով եւ աչքերիս տակ ընկնող գլուխը կարդալով: Տասնչորս տարեկան հասակիս, երբ տարուած էի գիտութեան անյագ փափաքով, մարդասէրն Աստուած անհրաժեշտ նկատեց «գտուած ալիւրին» միացնել նաեւ «առատ մեղրն ու իւղը»: Իսկ դրանք ճաշակել տուեց Տէր Արմէնժոն քահանայի բանախօսութիւնների միջոցով, որոնք իրենց որպէս նիւթ ունէին ներկայ կեանքի վախճանը եւ ապագայ կեանքի խորհուրդները<sup>1</sup>: Այդ վերջին գիրքը որոշ ժամանակով հայրիկին էին տուել իմ շատ սիրելի կարմեղականները, եւ ես, սովորութեանս հակառակ (որովհետեւ չէի ընթերցում հայրիկի գրքերը), խնդրեցի այն՝ կարդալու համար:

Այդ ընթերցումը նոյնպէս կեանքիս ամենամեծ շնորհներից մէկը եղաւ. այն կատարեցի դասասնենակիս պատուհանի մօտ նստած, եւ տպաւորութիւնները, որ դեռ զգում եմ, չափազանց խոր ու քաղցր են՝ արտայայտուել կարողանալու համար:

Քրիստոնէական հաւատքի բոլոր մեծ ճշմարտութիւնները, յաւիտենականութեան խորհուրդները հոգիս ընկղմում էին մի երանութեան մէջ, որն այս աշխարհից չէր: Արդէն իսկ, նախապէս տեսնում էի (ոչ անշուշտ մարմնի, այլ սրտի աչքով) այն ամէնը՝ ինչ Աստուած վերապահել է իրեն սիրողներին<sup>2</sup>, եւ տեսնելով՝ որ յաւիտենական վարձատրումները անհամեմատելիօրէն գերազանց են այս կեանքի տառապանքների համեմատութեամբ<sup>3</sup>, կամենում էի սիրել, սիրել Յիսուսին տառապագին, տալ Նրան սիրոյ հազարաւոր ապացոյցներ, քանի դեռ կարող էի այդ անել: Տեսրակիս մէջ արտագրեցի այդ գրքից մի քանի հատուածներ, ուր խօսուում էր կատարեալ սիրոյ եւ այն ընդունելութեան մասին, որ մարդասէրն Աստուած տալու է իր ընտրեալներին, այն պահին՝ երբ նոյն ինքն իսկ դառնալու է նրանց միակ, մեծ ու յաւերժական վարձատրումը. անդադար կրկնում էի սիրոյ ներգործութիւններ, որոնք հրդեհի էին մատնում սիրտս:

139. Սելինը դարձել էր մտածումներիս մտերիմ ընկերուհին: Սուրբ Ծննդեան գիշերից սկսած, այլեւս կարողանում էինք հասկանալ միմեանց, տարիքի տարբերութիւնն արդէն գոյութիւն չունէր, որովհետեւ մեծացել էի ե՛ւ հասակով, ե՛ւ յատկապէս շնորհով: Մինչ այդ, յաճախ էի դժգոհում Սելինի գաղտնիքներին հաղորդակից չլինելու համար. պատասխանում էր, որ դեռ չափազանց փոքր էի, հարկաւոր էր՝ որ «աթոռակից աւելի բարձր» լինէի, որպէսզի կարողանար վստահել ինձ: Շատ էի զուարճանում, երբ բարձրանում էի այդ այնքա՛ն թանկագին աթոռակի վրայ եւ խնդրում աւելի մտերմօրէն խօսել հետս: Բոլոր հնարքներս, սակայն, ապարդիւն էին անցնում. որոշակի տարածք մեզ այնուամենայնիւ բաժանում էր:

Յիսուս, որ կամենում էր տեսնել մեր համատեղ առաջադիմութիւնը, արիւնակցական պարզ կապերից աւելի հօր յարաբերութիւններ հաստատեց մեր սրտերի միջեւ: Մեզ հոգեւոր քոյրեր դարձրեց, մեր մէջ իրագործուեցին Սուրբ

<sup>1</sup> *Fin du monde présent et mystères de la vie future*, Imprimeries-Librairies de l'Oeuvre Saint Paul, 1882.

<sup>2</sup> 1Կր 2, 9

<sup>3</sup> Հռմ 8, 18

Յովհաննէս Խաչի հետեւեալ խօսքերը (ուղղուելով Փեսային՝ հարսը բացականչում է<sup>1</sup>). «Հետեւելով քո հետքերին, երիտասարդներն ընթանում են առանց յոգնութեան. նրանց հպումը կայծին եւ բուրումնաւէտ գինուն, առաջացնում է նրանց մէջ իղձեր՝ աստուածապէս օծուն»<sup>2</sup>: Այո՛, առանց յոգնութեան էինք ընթանում Յիսուսի հետքերով դրոշմուած ճանապարհով. սիրոյ կայծերը, որոնցով Նա օծում էր մեր հոգիները շոայլօրէն, համեմուած գինին, որ տալիս էր մեզ խմելու, մեր աչքերի առջեւից անհետացնում էին վաղանցուկ իրողութիւնները, եւ մեր շուրթերից դուրս էին փախչում սիրոյ հառաչանքներ, որոնք Իրենից էին ներշնչուած: Որքա՛ն քաղցր էին խօսակցութիւնները, որ ամէն երեկոյ ունենում էինք պատշգամում: Հեռո՛ւ հեռուներում ընկղմուած հայեացքներով դիտում էինք սպիտակափայլ լուսինը, որ առանց շտապելու բարձրանում էր ծառերից վեր ... արծաթեայ փայլը, որ սփռուում էր նիրհող բնութեան վրայ ... աստղերը, որ կայծկլտում էին մթին կապոյտի մէջ ... ուշ երեկոյի մեղմիկ, բայց եւ արդէն ցրտաշունչ հովը, որ մի գմայլելի ծփանք ու ալեկոծում էր առաջացնում անձրեւ սպառնացող գորշ ամպերի մէջ: Ամէն բան վերամբարձում էր մեզ դէպի Երկինք, դէպի այն գեղեցիկ Երկինքը, որից առայժմ ոչինչ չէինք տեսնում, եթէ ոչ միայն՝ «Ղինջ ցոլացումը»<sup>3</sup>:

Զգիտեմ՝ թէ սխալում եմ կամ ոչ, բայց ինձ թւում է՝ թէ մեր հոգիների արտագեղումը նման էր Սրբուհի Մոնիկայի եւ իր որդու հոգեւոր գմայլումին<sup>4</sup>, որոնք Օստիա քաղաքի նաւահանգստում յափշտակութեան մէջ էին ընկնում, ապշանքով լի, երբ իրենց առջեւ տարածուած էին տեսնում Արարչի հրաշագործութիւնները: Թւում է ինձ՝ թէ այնպիսի բարձրակարգ շնորհներ էինք ստանում, ինչպիսիք տրւում են մեծ Սրբերին: Ինչպէս Նմանութեան գիրքն է նկարագրում, Տէրը երբեմն պայծառ լոյսով է յայտնում, երբեմն էլ «ստուերների ու խորհրդաւոր պատկերների ներքոյ քաղցրօրէն քօղարկուած»<sup>5</sup>. այս եղանակով էր

<sup>1</sup> Ինչպէս Աստուածաշնչում (տե՛ս՝ Երգ Երգոց), այնպէս էլ գրեթէ բոլոր Սուրբ Հայրերի գործերում, արտայայտելու համար Աստուած-Եկեղեցի յարաբերութիւնը, իշխող կերպով օգտագործուում է (այլաբանօրէն) Փեսայ-հարս յարաբերութիւնը, քանի որ երկրային վիճակում՝ ամուսնական միութիւնն է նկատուում որպէս սիրոյ ամենաբարձր արտայայտութիւն, երբ անշուշտ ապրում է ըստ Աստուծոյ կամքի ու օրհնութեան, պահպանելով իր երեք յատկանիշները. միակութիւնը, անբաժանելիութիւնը, արգասաւորութիւնը: Կայ նաեւ հօր եւ որդու այլաբանական պատկերը (տե՛ս՝ սոյն գրքի թիւ 120 հատուածը) եւ այս վերջինը թերեւս ավելի հարուստ է Աւետարանի ոգիով, քանի որ նաեւ Տէրն մեր Յիսուս, երբ ուսուցանում է մեզ աղօթել, ասում է. «Հայր մեր, որ երկնքում ես ... »:

<sup>2</sup> SAN GIOVANNI DELLA CROCE, *Cantico Spirituale*, str. 25.

<sup>3</sup> ALFRED BESSE DE LARZE (1848-1904). *L'envers du Ciel*.

<sup>4</sup> Սրբուհի Մոնիկայի որդին Սուրբ Օգոստինոսն է, Քրիստոնէայ Եկեղեցու աստուածաբանութեան ու իմաստասիրութեան ամենամեծ ներկայացուցիչներից մէկը: Ծնուելով 354ին, փոթորկայոյզ կեանք է ապրում մինչեւ 384 թուականը, ապա դարձի է գալիս եւ 387ի Աւագ Շաբաթ օրը մկրտում Միլանի Ամբրոսիոս եպիսկոպոսի ձեռքով: Իր կամքին հակառակ, ժողովրդի բռնի հարկադրանքով, քահանայ է ձեռնադրւում 391ին, իսկ 396ին նրան է յանձնուում Իպպոնա քաղաքի եպիսկոպոսական աթոռը: Մահացել է 430ին, աճիւնը տեղափոխուել ու թաղուել է Իտալիայի Փաւիա քաղաքի Սուրբ Պետրոս եկեղեցում: Հեղինակն է աստուածաբանական ու իմաստասիրական 232 գրքերի, որոնց մէջ կենտրոնական դիրք են գրաւում «Սոստովանութիւնները», «Սաղմոսաց Մեկնութիւնը», «Երրորդութեան մասին» եւ «Աստուծոյ քաղաքի մասին» գործերը: Իր աստուածաբանութեան առանցքն է հանդիսանում մարդու ներաշխարհը, աստուծային շնորհի լոյսի ներքոյ դիտուած. «Ինքը քեզնից դուրս մի՛ եկ, քանի որ ճշմարտութիւնը ներքին մարդու մէջ է բնակուում»: Միմիայն խղճի հետ համաձայնութեան դէպքում է յստակում միտքը, ազատում կասկածներից եւ միաժամանակ բացայայտում Աստուծոյ ներկայութիւնը իր կեանքից ներս:

<sup>5</sup> Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, ԽԳ 4

յայտնուում մեր հոգիներին, բայց որքան նրբին ու թեթեւ էր այդ քօղը, որ թաքցնում էր մեզնից Յիսուսին: Կասկածն արդէն անհնարին էր, հաւատքը եւ յոյսը հարկաւոր չէին այլեւս. սէրը երկրի վրայ մեզ գտնել էր տալիս Նրան, ում մենք փնտուում էինք: «Նրան միայնակ գտնելով, Նա մեզ տուել էր Իր համբոյրը, որպէսզի ապագայում ոչ ոք չկարողանար արհամարհել մեզ»<sup>1</sup>:

140. Այդքան մեծ շնորհների գեղումը չէր կարող անպտուղ մնալ. ընհակառակն, այդ պտուղները շատ առատ եղան եւ առաքինութիւնների գործադրումը մեր համար դարձաւ քաղցր ու բնական: Սկզբից ի վեր, դէմքիս արտայայտութիւնները յաճախ էին մատնում հոգուս խռովայոյզ վիճակն ու պայքարները, բայց կամաց կամաց այդ արտայայտութիւնները վերացան եւ անձիցս հրաժարուելը շատ աւելի հեշտ դարձաւ իմ համար<sup>2</sup>: Մի՞թէ Յիսուս չի ասել արդէն. «Ով ունի, նրան աւելի կը տրուի եւ կ'աւելացուի նրա ունեցածը»<sup>3</sup>: Հաւատարմութեամբ ընդունուած մի շնորհի փոխարէն, Նա ինձ պարգեւում էր շատ ու շատ ուրիշներ: Իր Անձն էր տալիս ընդմէջ Սուրբ Հաղորդութեան, որն այդ օրերին աւելի յաճախ էի ստանում՝ քան համարձակուում էի յուսալ: Մի կանոն էի որդեգրել, ըստ որի՝ բաց չէի թողնում եւ ոչ իսկ մէկն այն Հաղորդութիւնների, որոնք խոստովանահայրս թոյլատրել էր ընդունել, առանց սակայն դրանց թիւն աւելացնել խնդրելու: Այն ժամանակ այսօրուայ համարձակութիւնը դեռ չունէի, ապա թէ ոչ՝ ա՛յլ կերպ կը գործէի, որովհետեւ վստահ եմ, որ հաւատացեալը պարտաւոր է յայտնել իր խոստովանահօրը՝ թէ ինչպիսի հոգեւոր երանութիւն է պատճառում իրեն Ամենասուրբ Հաղորդութեան միջոցով Աստուծոյ հետ միանալը: Ոսկեայ սրբատուփի մէջ մնալու համար չէ, որ Նա իջնում է Երկնքից ամէն օր, այլ՝ մի ուրիշ Երկինք գտնելու համար, եւ այս վերջինը անհամեմատելիօրէն աւելի սիրելի է իրեն, քան առաջինը. մեր հոգիների Երկինքը, որ ստեղծուած է Իր պատկերով ու նմանութեամբ, եւ որ կենդանի տաճարն է պաշտելի Երրորդութեան:

Յիսուս տեսնում էր բարի կամքս եւ սրտիս ուղղութիւնը. Մայիս ամսուայ ընթացքում, խոստովանահայրս թոյլատրեց հաղորդուել շաբաթը չորս անգամ, իսկ Յունիսին աւելացրեց նաեւ հինգերորդը:

Երբ դուրս էի գալիս խոստովանարանից, լալիս էի անսահման քաղցրութեամբ. թւում էր՝ թէ Յիսուս ինքն էր փափաքում նուիրուել ինձ, որովհետեւ խոստովանանքս շատ կարճ էր տեւում, մի բառ անգամ չէի ասում ներքին զգացումներիս մասին, քանզի այնքան հարթ էր ճանապարհը, որով ընթանում էի, եւ այնքան ուղիղ, այնքան լուսաւոր, որ Յիսուսից բացի ուրիշ առաջնորդի կարիք չունէի: Առաջնորդներին նմանեցնում էի հաւատարիմ հայելիներին, որոնց միջոցով Յիսուս արտացոլում է հոգիների մէջ, եւ ասում էի՝ որ իմ պարագային բարին Աստուած չէր օգտագործում միջնորդներ, այլ ազդում էր ուղղակի կերպով:

141. Երբ որեւիցէ պարտիզպան յատուկ խնամքներ է շուայում բոյսերից մէկին, նրա պտուղները ժամանակից շուտ հասունութեան հասցնելու համար, դա չի անում պտուղները ծառից կախուած թողնելու նպատակով, այլ՝ որպէսզի տօնական սեղանի վրայ ներկայացնի դրանք: Նմանօրինակ դիտաւորութեամբ էր վարում նաեւ Յիսուս, երբ շնորհների անձրեւ էր տեղում իր փոքրիկ ծաղկի վրայ: Յիսուս, որ իր երկրային կեանքի ընթացքում բացականչում էր ուրախութեամբ խանդավառ. «Գոհութիւն եմ

<sup>1</sup> Երգ 8, 1

<sup>2</sup> Սրբուհին ի նկատի ունի տառապանքներին ու ամէն տեսակ նեղութիւններին ուրախ դէմքով համբերելը: Հմմտ. Մտթ 6, 16-18

<sup>3</sup> Մտթ 13, 12

յայտնում Քեզ, Հայր, որովհետեւ ծածկեցիր այս բաները իմաստուններից ու գիտուններից եւ յայտնեցիր մանուկներին»<sup>1</sup>, կամենում էր ինձնում ճառագայթել Իր ողորմութիւնը: Քանի որ փոքրիկ էի ու տկար, խոնարհւում էր դէպի ինձ եւ շշուկով ուսուցանում Իր սիրոյ գաղտնիքները: Ա՛հ, եթէ գիտունները, իրենց ամբողջ կեանքն ուսումների մէջ անցկացնելուց յետոյ գային ինձ հարցուփորձ անելու, անկասկած ապշած կը մնային, տեսնելով տասնչորսամեայ մի աղջնակ, որ ըմբռնում է կատարելութեան գաղտնիքները, գաղտնիքներ՝ որոնք իրենց գիտութիւնը չի կարող բացայայտել, որովհետեւ դրանց տիրանալու համար հարկաւոր է հոգով աղքատ լինել:

Ինչպէս ասում է Սուրբ Յովհաննէս Խաչը. «Ո՛չ առաջնորդ ունէի, եւ ո՛չ էլ լոյս, բացի նրանից՝ որ շողում էր սրտիս մէջ. այդ լոյսն առաջնորդում էր ինձ կէսօրուայ արեւից աւելի անվրէպ, դէպի այն վայրը՝ ուր սպասում էր ինձ Նա՝ ով ճանաչում է ինձ կատարելապէս»<sup>2</sup>: Այդ վայրը Կարմեղոսն էր, բայց փնտռածս Անձի հովանու ներքոյ հանգչելուց առաջ<sup>3</sup>, պարտաւոր էի բազում տառապանքների միջով անցնել: Աստուածային կանչը, սակայն, այնքան հզօր էր, որ եթէ նոյնիսկ բոցերի միջով անցնելու կարիքը զգացուէր, կ'անէի դա՝ Յիսուսին հաւատարիմ լինելու համար:

142. Կոչումս քաջալերելու համար միայն մի անձ գտայ, այն է՝ սիրելի Մայրս: Միրտս հաւատարիմ արձագանք գտաւ նրա սրտում եւ առանց նրա դժուար թէ կարողանայի հասնել այն օրհնեալ ափին, ուր նա ապրում էր արդէն հինգ տարի: Այո՛, արդէն հինգ տարի էր, ինչ հեռու էի ձեզնից, Մայր իմ, կարծում էի՝ թէ այլեւս կորցրել էի ձեզ, բայց փորձութեան պահին ձեր ձեռքն էր, որ ինձ մատնանչեց անցնելիք ճամփաս: Այս մխիթարութեան կարիքը իրօք ունէի, որովհետեւ Կարմեղոսի շուրջ խօսակցութիւնները օրըստօրէ աւելի տաժանելի էին դարձել իմ համար, չէի կարողանում այնտեղ մտնելու բաղձանքիս մասին խօսել՝ առանց մերժման դառն դատաւճիռն ունկնդրելու: Մարիան, տարիքս որպէս պատճառ ունենալով, անում էր ամէն բան՝ խափանելու համար Կարմեղոս կատարելիք մուտքս. դուք ինքներդ, Մայր իմ, անկեղծութիւնս փորձելու համար, աշխատում էիք որոշակի սահմանների մէջ հաւաքել եռանդս: Եւ իրօք, եթէ իրական կոչում չունենայի, սկզբից եւեթ կը հրաժարուէի, քանի որ միայն արգելքների էի հանդիպում, հազիւ թէ փորձում էի պատասխանել Յիսուսի կանչին: Այս ամէնից ճնշուած, չէի կամենում Կարմեղոս մտնելու փափաքս յայտնել նոյնիսկ Սելինին, որի պատճառով էլ շատ էի տանջւում, քանի որ իմ համար շատ դժուար էր նրանից որեւէ բան գաղտնի պահելը: Այս տառապանքս, սակայն, երկար չտեւեց. շուտով սիրելի քոյրս տեղեկացաւ որոշմանս եւ, բոլորի նման տարհամոզման փորձեր կատարելու փոխարէն, սքանչելի քաջութեամբ ընդունեց զոհողութիւնը, որ պահանջում էր իրենից Աստուած: Բայց իր պատասխանի մեծութիւնը լաւ ըմբռնելու համար, հարկաւոր է իմանալ՝ թէ ինչ աստիճանի էինք իրար միացած: Ապրում էինք միեւնոյն գաղափարականով, մի քանի ամիսներից ի վեր վայելում էինք այն ամենաքաղցր կեանքը, որի մասին երկու ընկերուհիներ երազել միայն կարող են. չըջակայ ամէն բան համապատասխանում էր մեր ճաշակներին, մեզ տրուած էր մեծ ազատութիւն, մի խօսքով՝ համոզուած էի, որ դա էր ամենամեծ երջանկութիւնը, որ հնարաւոր է ճաշակել երկրի վրայ: Հազիւ էինք սկսել համտեսել այդ ամենամեծ երջանկութիւնը, երբ անհրաժեշտութիւնը զգացուեց միմեանցից ազատօրէն բաժանուելու. եւ Սելինը չըմբոստացաւ: Յիսուս կանչում էր ինձ իրենից առաջ եւ, թերեւս, նա իրաւունք ունէր դժգոհելու. զգալով միեւնոյն կանչը, որ ձգում էր ինձ, իրենն էր մեկնելու հերթը: Բայց ինչպէս մարտիրոսների

<sup>1</sup> Մտթ 11, 25

<sup>2</sup> SAN GIOVANNI DELLA CROCE, *Nocte oscura*, str. 3-4.

<sup>3</sup> Երգ 2, 3

ժամանակներում, նրանք՝ որ մնում էին բանտում, իրենց վերջին զուարթ համբոյրն էին տալիս մեկնող եղբայրներին, որոնք գնում էին իրենց արիւնը հեղելու յանուն Յիսուսի, թերեւս մխիթարուով էին այն մտքով, որ իրենց համար գուցէ առաւել եւս արիւնալի խոշտանգումներ էին վերապահուած, այնպէս էլ Սելինը թողեց՝ որ իր թերեզան հեռանար եւ ինքը միայնակ մնար այդ փառահեղ ու արիւնալի պայքարում<sup>1</sup>, որը Յիսուսի սիրուց ստացուած իր առանձնաշնորհումն էր:

143. Այսպիսով, Սելինը դարձաւ բոլոր պայքարներին ու յոգնութիւններիս մտերիմ խորհրդակիցը եւ այնպիսի ջերմ եռանդով մասնակցեց դրանց, որ թւում էր՝ թէ իր իսկ կոչման հարցն էր քննարկուում: Իր կողմից հակառակութիւններ ընդունելու վախ չունէի, բայց ինչպէ՞ս հաղորդէի մտքերս հայրիկին: Ինչպէ՞ս խնդրէի թողնել իր թագուհուն, իրեն՝ որ արդէն զոհասեղան էր բարձրացրել իր երեք մեծ զաւակներին: Ա՛հ, քանի՛ քանի՛ ներքին մարտեր մղեցի եւ որքան տառապեցի խօսելու քաջութիւն զգալուց առաջ: Եւ սակայն, պարտաւոր էի որոշում կայացնել: Տասնչորս ու կէս տարեկան լինելու մօտ էի, միայն վեց ամիսներ էին ինձ բաժանում Սուրբ Ծննդեան հոգեգմայլ գիշերից, որում որոշել էի Կարմեղոս մտնել, այն նոյն ժամին, որում մի տարի առաջ ստացել էի «իմ շնորհը»: Մեծագոյն գաղտնիքս յայտնելու համար ընտրեցի Հոգեգալստեան օրը<sup>2</sup>: Առաւօտեան, Առաքեալներին խնդրեցի աղօթել ու բարեխօսել իմ համար, ներշնչել այն խօսքերը՝ որոնք պարտաւոր էի ասել: Իրենց պարտքն էր օգնել այն երկիւղած մանկանը, որին Աստուած սահմանել էր դառնալ առաքեալների առաքեալը, աղօթքի ու զոհողութեան միջոցով: Միայն կէսօրից յետոյ, երեկոյեան ժամերգութիւնից վերադարձին, կարողացայ գտնել սիրելի հօրս հետ խօսելու առիթը: Գնացել նստել էր պարտէզում եւ բնութեան հրաշալիքներն էր դիտում: Արեւն իր քաղցրիկ ճառագայթներով ոսկեգօծում էր երկնասլաց բարձր ծառերի կատարները, ուր թռչուններն իրենց երեկոյեան աղօթքն էին ուրախութեամբ երգում: Հայրիկի գեղեցիկ դէմքը մի երկնային արտայայտութիւն էր ստացել, զգում էի՝ որ խաղաղութեամբ էր ողողուած սիրտը: Համր քայլերով մօտեցայ ու նստեցի իր մօտ. աչքերս լի էին արցունքով: Ինձ նայեց անհուն քնքշանքով, գլուխս հենեց իր կրծքին ու ասաց. «Ի՞նչ է պատահել, փոքրիկ թագուհի, ասա՛ ինձ»: Ապա, յուզմունքը թաքցնելու համար ոտքի կանգնելով, սկսեց մեղմօրէն քայլել, գլուխս միշտ իր կրծքի վրայ ունենալով: Արցունքների միջից խօսեցի Կարմեղոս մտնելու փափաքիս մասին: Այնժամ իր արտասուքները նոյնպէս խառնուեցին իմոնց, բայց մի խօսք անգամ չասաց կոչումիցս ետ կանգնեցնելու համար: Գոհացաւ ուշադրութեանս հրաւիրելով այն փաստը, որ դեռ շատ երիտասարդ էի այդպիսի ծանր որոշում կայացնելու համար: Ես, սակայն, դատու այնքան լաւ պաշտպանեցի, որ հայրիկը, իր պարզ ու վեհանձն բնաւորութեան համաձայն, շուտով համոզուեց, որ իղձերս համապատասխանում էին Աստուծոյ կամքին, եւ ըստ իր խորապէս ապրուած հաւատքի բացականչեց, որ Աստուած իրեն մեծ պատուի էր արժանացնում, պահանջելով իր բոլոր զաւակները: Դեռ շարունակում էինք քայլել. աննման հօրս բարութիւնից մխիթարուած սիրտս առանց որեւէ դժուարութեան էր հեղում իր սրտի մէջ: Թւում էր՝ թէ հայրիկը վայելում էր այն խաղաղ բերկրանքը, որը մեզ շնորհում է սիրով կատարուած զոհողութիւնը: Հետս խօսում էր ինչպէս մի Սուրբ եւ կ'ուզէի մի առ մի յիշատակել իր խօսքերն այստեղ, բայց դրանց շուրջ չափազանց օծուն յիշատակ եմ պահպանել, որը չեմ կարող երկրային բառերով թարգմանել: Բոլոր մանրամասներով յիշում եմ թագաւորիս խորհրդաւոր արարքը, որ

<sup>1</sup> Թերեզան ակնարկում է Պրն. Մարթինի հիւանդութեանը, որի խնամքները ծանրացել էին Սելինի վրայ, քանի որ միայն վերջինս էր մնացել հայրական տանը:

<sup>2</sup> 29 Մայիս 1887:

կատարեց առանց անդրադառնալու: Մօտեցաւ պատին եւ ցոյց տուեց այն փոքրիկ սպիտակ ծաղիկները, որ աճում էին նրա վրայ, նմանուելով գեղանկարուած շուշանների: ապա քաղեց նրանցից մէկը եւ դէպի ինձ մեկնեց բացատրելով թէ որքան մեծ խնամքով էր բարին Աստուած ստեղծել նրան եւ պահպանել մինչեւ այդ օրը: Ի լուր այդ խօսքերի, ինձ թւում էր՝ թէ լսում էի իմ իսկ պատմութիւնը, այնքան նման էին պարգեւները, որ Յիսուս շնորհել էր խոնարհ շուշանին եւ փոքրիկ թերեզային: Ընդունեցի այդ ծաղիկը իբրեւ մասունք, եւ նկատեցի՝ որ հայրիկն այն հողից դուրս էր հանել արմատներով հանդերձ, առանց վնասելու, կարծես որպէսզի շարունակէր ապրել աւելի պարարտ մի ա՛յլ հողում, քան այն բնօրրանը՝ որում անց էին կացել իր առաջին օրերը: Այս միեւնոյն գործն էր կատարել իմ համար հայրիկը սակաւ վայրկեաններ առաջ, թոյլատրելով բարձրանալ Կարմեղոսի լեռը եւ լքել այն անուշիկ հովիտը, ուր գցել էի առաջին քայլերս:

Նրբագեղ սպիտակ ծաղիկը նմանութեան գրքի մէջ դրի, այն գլխի սկզբում, որ կոչուում է «Յիսուսին պէտք է սիրել ամէն բանից աւելի»<sup>1</sup>, եւ դեռ այնտեղ է, միայն թէ ցօղունը կոտրուել է ճիշտ արմատների մօտ. թւում է՝ թէ մարդասէրն Աստուած կամենում է այսպիսով յայտնել, որ շուտով է խզելու իր փոքրիկ սպիտակ ծաղիկ գերութեան շղթաները, եւ չի թողնելու, որ այն խամրի այս երկրի վրայ<sup>2</sup>:

144. Հայրիկի համաձայնութիւնը ստանալուց յետոյ կարծում էի՝ թէ այլեւս անվախ կերպով կարող էի դէպի Կարմեղոս սաւառնել: Բայց դեռ բազում տառապանքների ու մաքառումների բովով էր անցնելու կոչումս:

Ընդունուած որոշումը երկիւղով հաղորդեցի մօրեղբօրս<sup>3</sup>: Հետս խօսեց ամենայն քնքշութեամբ, բայց մեկնելու համաձայնութիւն չտուեց, ընդհակառակն՝ արգելեց կոչման շուրջ խօսել տասնեօթ տարեկանս լրացնելուց առաջ: Ըստ իր, մարդկային խոհեմութեանը հակառակ բան էր թոյլատրելը, որ տասնհինգամեայ մի աղջնակ Կարմեղոս մտնի. կարմեղական կեանքը մարդկանց աչքին իմաստասէրներին յատուկ թուալով, քրիստոնէութեան դէմ մեծ յանցանք կը լինէր անփորձ մանկան այնտեղ գտնուելը: Եւ յետոյ, ի՞նչ կ'ստէին մարդիկ, եւ այլն, եւ այլն: Իսկ վերջում նաեւ աւելացրեց, որ իրեն հակառակը համոզելու համար հրաշք էր հարկաւոր: Տեսայ, որ բոլոր պատճառաբանումներն անօգուտ էին, չչարունակեցի խօսել եւ սիրտս ամենախոր դառնութեան մէջ ընկղմուած, մի կողմ քաշուեցի: Միակ մխիթարութիւնս աղօթքն էր: Յիսուսին խնդրում էի տալ պահանջուած հրաշքը, քանի որ միայն այդ գնով կը կարողանայի պատասխանել իր կանչին:

Բաւական երկար ժամանակ անցաւ<sup>4</sup> մինչեւ համարձակուեցի կրկին խօսել մօրեղբօրս հետ. իմ համար շատ դժուար էր իր մօտ գնալը, իսկ իր կողմից թւում էր՝ թէ մոռացել էր կոչմանս շուրջ խօսակցութիւնը: Բայց աւելի ուշ իմացայ, որ ցաւագին տրտմութիւնս մեծ ազդեցութիւն էր գործել ի նպաստ իմ: Հոգուս երկնակամարի վրայ յոյսի նշոյլներ սփռելուց առաջ, հաճելի եղաւ Տիրոջը մի տառապալի մարտիրոսութիւն ուղարկել ինձ, որ տեւեց երեք օր<sup>5</sup>: Ա՛հ, երբեք այդքան լաւ չէի հասկացել՝ ինչպէս այդ փորձի շրջանում, Ամենասուրբ Կոյսի եւ Սուրբ Յովսէփի վիշտը, երբ փնտռում էին կորած Յիսուս Մանկանը: Մահասարսուռ տխուր անապատում էի գգում ինձ, կամ աւելի ճիշտ՝ հոգիս նմանում էր այն դիւրաբեկ

<sup>1</sup> Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Բ, Է

<sup>2</sup> Թերեզան գրում է 1895ին: Հիւանդանալու է 1896ի Զատիկին եւ թողնելու է երկիրը 1897ի Սեպտ. 30ին:

<sup>3</sup> Պրն. Գէրէնը որոշմանը տեղեկացաւ 1887ի Հոկտ. 8ին, շաբաթ:

<sup>4</sup> Տասնհինգ օր:

<sup>5</sup> Զորեքշաբթի 19ից մինչեւ շաբաթ 22 Հոկտեմբեր:

նաևակին, որը մրրկայոյզ ալիքների կամքին էր յանձնուած առանց դեկալալի: Գիտեմ, Յիսուս ներկայ էր, ննջում էր նաևակիս մէջ<sup>1</sup>, բայց գիշերն այնքան մութ էր, որ չէի կարողանում տեսնել Նրան. ոչինչ ինձ չէր լուսաւորում եւ կայծակներն անգամ չէին ձեղքում խաւար ամպերը: Այո՛, թախծալի է փայլակների լոյսը, բայց եթէ փոթորիկը սանձարձակուէր, հնարաւորութիւնը կ'ունենայի գէթ մի պահ տեսնելու Նրան ... : Գիշեր էր, հոգուս խոր գիշերը ..., ինչպէս Յիսուս հոգեվարքի պարտէզում, զգում էի ինձ միայնակ, միսիթարութիւններ չէի ստանում ո՛չ երկրից, ո՛չ էլ Երկնքից. թւում էր՝ թէ մարդասէրն Աստուած լքել էր ինձ: Եւ թւում է թէ բնութիւնը նոյնպէս մասնակցում էր դառն տառապանքներին. այդ երեք օրերի ընթացքում արեւի մի շող անգամ չերեւաց, իսկ անձրեւը ամպերից թափւում էր հեղեղի նման: Ես իրօք նկատել եմ, որ կեանքիս բոլոր ծանր պահերին բնութիւնը արտացոլել է հոգեվիճակս: Արտասուալի օրերին երկինքը լալիս է իմ հետ, իսկ խնդութեան օրերին արեւը փայլում է եւ ջինջ կապոյտը չի մթազնում եւ ոչ իսկ մի ամպով:

Վերջապէս չորրորդ օրը, որ շաբաթ օր էր (եւ ինչպէս բոլոր շաբաթ օրերը, նուիրուած էր Երկնքի քաղցրիկ թագուհուն), գնացի մօրեղբօրս այցելելու: Ինչպիսի անակնկալի մատնուեցի, երբ մօրեղբայրս, առանց որեւէ խօսքի, իր աշխատասենեակ առաջնորդեց ինձ եւ սկսեց մեղմօրէն յանդիմանել իրենից վախենալուս համար: Իսկ վերջում ասաց. «Հարկաւոր չէ հրաշքներ հայցել, ես պարզապէս խնդրեցի Տիրոջը՝ սրտի մի պարզ կողմնորոշում»՝ պարզեւել ինձ, եւ աղօթքս ընդունելի եղաւ»: Ա՛հ, ես այլեւս տրամադիր չէի հրաշք խնդրելու, որովհետեւ, ըստ իս, հրաշքն արդէն իսկ շնորհուել էր. մօրեղբայրս այլեւս նոյնը չէր: Առանց «մարդկային խոհեմութեան» ակնարկելու, ասաց. «Դու մի փոքրիկ ծաղիկ ես, որը բարին Աստուած կամենում է քաղել. ես չեմ կարող հակառակուել Իրեն»:

145. Այս վերջին պատասխանն իրօք արժանի էր իրեն: Արդէն երրորդ անգամն էր, որ անցեալ դարերի փառահեղ հաւատքը յիշեցնող այդ քրիստոնեան թոյլատրում էր իր սրտին որդեգրած զաւակների մեկնումը՝ բնակուելու աշխարհից հեռու: Մօրեղբօրս կինը նոյնպէս զմայլելի եղաւ՝ ցուցաբերած գորովով ու խոհեմութեամբ: Չեմ յիշում, որ տառապանքիս ժամանակ մի խօսք անգամ ասած լինի, որ կարող էր ցաւս աւելացնել: Նկատում էի, որ մեծ գութ ունէր իր փոքրիկ թերեզայի հանդէպ, այնպէս՝ որ երբ ստացայ մօրեղբօրս հաւանութիւնը, ինքն էլ իր համաձայնութիւնը տուեց, բայց միեւնոյն ժամանակ հազար ու մի ձեւով փաստելով, որ մեկնումս իրեն վիշտ էր պատճառելու: Աւա՛ղ, մեր սիրելի ազգականները դեռ շատ հեռու էին նախատեսելուց, որ վերանորոգելու էին իրենց նոյնատիպ գոհը եւս երկու անգամ<sup>2</sup>: Բայց Իր խնդրող ձեռքը երկարելիս, Աստուած այն երբեք չներկայացրեց դատարկ. Իր բարեկամները, որոնք այնքան սիրելի էին Իրեն, կարողացան առատօրէն ստանալ անհրաժեշտ ուժն ու քաջութիւնը ... : Մօրեղբօրս դրական պատասխանից յետոյ, հասկանում էք, Մայր իմ, թէ որքան զուարթաբայ վերադարձայ Բուխսոնէ, ուղեկցութեամբ գեղեցիկ երկնքի, որի ամպերն ամբողջովին ցրուել էին: Հոգուս գիշերը նոյնպէս վերջացել էր: Յիսուս, արթնանալով, վերադարձրել էր ուրախութիւնս. ալիքների դղրդիւնն այլեւս հանդարտուել էր: Փորձութիւնների հողմի փոխարէն, թեթեւ զեփիւռն էր առաջ մղում նաևակս, եւ կարծում էի՝ որ այլեւս շատ շուտով հասնելու էի ինձ այնքան մօտ թուացող օրհնեալ ափին: Եւ իրօք մօտ էր, միայն թէ մէկից աւելի փոթորիկներ էին դեռ սանձագերծուելու եւ, խաւարում սքողելով փարոսի լոյսը, կարծել էին տալու՝ թէ ծովեզերքից շա՛տ էի հեռացել, առանց վերադարձի յոյսի:

<sup>1</sup> Մտթ 8, 24

<sup>2</sup> Թերեզան ակնարկում է իր զարմուհի Մարիամ Գէրէնի եւ Սելինի մուտքին կարմեղոս:

146. Մօրեղբօրս հաւանութիւնը ստանալուց մի քանի օր անց, շտապեցի այցելել ձեզ<sup>1</sup>, Մայր իմ, եւ յայտնել, որ բոլոր արգելքները յաղթահարուել էին. ինչպիսի անակնկալի մատնուեցի, սակայն, եւ ինչպիսի վշտակրութեան, երբ ձեզնից տեղեկացայ, որ վանքի Մեծաւորը<sup>2</sup> չէր թոյլատրում ինձ Կարմեղոս մտնել քսանմէկ տարեկանս լրանալուց առաջ: Ոչ ոքի մտքով չէր անցել այսպիսի ընդդիմութեան հնարաւորութիւնը, ընդդիմութիւն՝ որ առաւել անյաղթելի էր, քան նախորդները: Եւ սակայն, առանց վհատուելու, ես ինքս հայրիկի ու Սելինի հետ գնացի Մեր Հօր<sup>3</sup> մօտ, փորձելու համոզել իրեն, թէ՛ այո՛ ունէի կոչում: Շատ սառնօրէն ընդունեց մեզ. աննման հայրս նոյնպէս միացաւ իմ աղաչանքներին, բայց չկարողացանք փոփոխում մտցնել նրա դիրքորոշման մէջ: Ասում էր՝ թէ՛ վտանգներ չկային սպասման մէջ, թէ՛ կարող էի կարմեղական կեանքն ապրել նաեւ տանը, թէ՛ եթէ վանական ամբողջ օրակարգով առայժմ չընթանայի, դրանով ոչինչ էլ չէր փոխուի, եւ այլն, եւ այլն ... բայց վերջում աւելացրեց, որ ինքը Եպիսկոպոսի նուիրակն է միայն, որ եթէ Եպիսկոպոսը կամենար թոյլատրել իմ մոտքը Կարմեղոս, այդպիսի դէպքում ինքը ոչինչ էլ չէր ունենայ ասելու ... : Քահանայատնից դուրս եկայ արցունքների մէջ, բարեբախտաբար թաքնուած էի անձրեւանոցի տակ, որովհետեւ երկնքից հեղեղ էր տեղում: Հայրիկը չգիտէր՝ թէ ինչպէս մխիթարէր ինձ: Խոստացաւ Բէյէոյ տանել երբ կամենայի, որովհետեւ որոշել էի նպատակիս հասնել ամէն գնով, եւ սպառնում էի մինչեւ իսկ Սրբազան Հօրը<sup>4</sup> դիմել, եթէ Եպիսկոպոսը չթոյլատրէր Կարմեղոս մտնել տասնհինգամեայ հասակում:

147. Դեռ ուրիշ շատ իրադարձութիւններ տեղի ունեցան մինչեւ Բէյէոյ կատարուելիք ճամբորդութիւնը<sup>5</sup>. արտաքուստ, կեանքս ընթանում էր իր սովորական հունով. սովորում էի, նկարչութեան դասերի յաճախում Սելինի հետ: Եւ որ ամենակարեւորն է, աճում էի բարի Աստծոյ սիրոյ մէջ, նորանոր լուսաբանումներ ու մղումներ էին ծնւում սրտիս խորքում, երբեմն իրական յափշտակութիւններ էի ունենում: Մի երեկոյ, չիմանալով այլեւս ինչպէս յայտնել Յիսուսին, որ սիրում էի իրեն, եւ որ կամենում էի՝ որ բոլորը սիրեն իրեն ու փառաբանեն ամէնուր, ցաւով մտածեցի, որ Նա երբեք սիրոյ մի ներգործութիւն անգամ չի ստացել դժոխքից: Այնժամ ասացի մարդասէրն Աստծուն, որ իրեն հաճոյք պատճառելու համար պատրաստ էի ինձ այնտեղ նետուած տեսնել, որպէսզի Նա այնտեղ եւս սիրուի յաւերժօրէն, անարգանքի այդ վայրում ... : Գիտէի, որ դա չէր կարող ծառայել Աստծոյ փառքին, որովհետեւ Նա մեր երջանկութիւնն է միայն կամենում. բայց երբ սիրում ես, ուզում ես հազար ու մի խենթութիւններ ասել: Այդպէս էի արտայայտում ո՛չ թէ որովհետեւ չէի փափաքում Երկնքում բնակուել, այլ որովհետեւ այնժամ իմ Երկինքը, բուն իմը, ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ Սէրը. եւ զգում էի, ինչպէս Պօղոս Առաքեալը, որ ոչինչ չէր կարող ինձ Աստծոյ սիրուց տարանջատել<sup>6</sup>:

<sup>1</sup> Հաւանաբար Հոկտ. 25ին, երեքշաբթի: Հմմտ. CYRILLE DE LA MERE DE DIEU O.C.D., Chronologie et concordance thérésienne, Rome 1958, p. 34.

<sup>2</sup> Գերյարգելի Դըլարոէթը, «Սուրբ Յակոբոս» եկեղեցու ժողովրդապետը:

<sup>3</sup> Այսպէս են կարմեղականները կոչում իրենց եկեղեցական մեծաւորներին:

<sup>4</sup> Այդ օրերին Հռոմի Սրբազան Քահանայապետն էր Լեոն ԺԳ-ը:

<sup>5</sup> Թերեզայի այս արտայայտութիւնը բացայայտում է նրա հոգու սարսափելի տառապանքները, որովհետեւ իրականում այդ ճամբորդութիւնը տեղի ունեցաւ Հոկտ. 31ին, Տէր Դըլարոէթի հետ հանդիպումից մի քանի օր յետոյ միայն: Տառապող հոգու համար շատ դժուար է անցնում եւ շատ երկար է թւում ժամանակը:

<sup>6</sup> Հմմտ. Հռմ 8, 35-39

148. Աշխարհը թողնելուցս առաջ, բարին Աստուած մի քաղցրիկ մխիթարութիւն տուեց ինձ. հնարաւորութիւնն ունեցայ մօտիկից դիտելու մանուկների հոգիները: Ընտանիքի փոքրը լինելով, երբեք չէի վայելել այս ուրախութիւնը, բայց ահա տես՝ որ տխուր պարագաներն էին հայթայթում իմ համար այդ ուրախութիւնը. մի խեղճ կին, որ ազգականն էր մեր տան սպասուհու, մահացաւ երիտասարդ հասակում եւ անմայր թողեց իր երեք փոքրիկ զաւակներին: Վերջին հիւանդութեան ընթացքում, մեր տանը հիւրընկալեցինք նրանցից երկու փոքրերին, որոնցից մեծը դեռ վեց տարեկան չկար: Ահա նրանցով էի զբաղուում ամբողջ օրը: Իմ համար մեծ սփոփանք էր տեսնելը՝ թէ ինչպէս էին հաւատում բոլոր խօսքերիս անխտիր: Անհրաժեշտ է միայն, որ Սուրբ Մկրտութիւնը հոգիներում սերմանի աստուածաբանական առաքինութիւնների<sup>1</sup> սերմը, որպէսզի դրանք ի յայտ գան մանկութիւնից ի վեր. ապագայ երանութեան յոյսը բաւական է՝ սիրով փարուելու համար ծանր գոհողութիւններին եւ կեանքի հազար ու մի դժուարութիւններին: Երբ կամենում էի իմ երկու աղջնակներին համերաշխ տեսնել, փոխանակ խաղալիքներ ու անուշեղէններ խոստանալու նրան՝ ով ներողամիտ կը գտնուէր իր քրոջ հանդէպ, պատմում էի այն յաւիտենական վարձատրումների մասին, որ Յիսուս Մանուկը Երկնքում տալու է խելօք փոքրիկներին: Նրանցից մեծը, որի միտքն արդէն սկսում էր զարգանալ, ինձ էր նայում ուրախութիւնից փայլող աչքերով, տասնեակ քնքուշ հարցիկներ էր ուղղում Յիսուս Մանկան եւ իր գեղեցիկ Երկնքի շուրջ, ապա նաեւ խոստանում բուռն ոգեւորութեամբ, որ այդուհետեւ ներող է լինելու իր փոքրիկ քրոջ նկատմամբ. ասում էր՝ թէ կեանքում երբեք չէր մոռանալու այն բոլորը, ինչ ասուել էր իրեն «մեծ օրիորդի» կողմից (այսպէս էր ինձ անուանում): Մօտիկից տեսնելով այդ անմեղ հոգիները, հասկացայ՝ թէ ինչպիսի աղետալի դժբախտութիւն էր նրանց ըստ բարու չկազմաւորելը իրենց առաջին զարթօնքից ի վեր, քանի որ նման են այն փափուկ մոմին, որի վրայ հնարաւոր է դրոշմել ե՛ւ առաքինութիւնները, ե՛ւ, աւա՛ղ, չարը: Հասկացայ այն՝ ինչ Յիսուս ասում է Աւետարանում. «Ով այս փոքրիկներից մէկին գայթակղեցնի, նրա համար աւելի լաւ է, եթէ պարանոցից քար կապելով ծովի խորքը ընկղմուի»<sup>2</sup>: Ա՛հ, քանի՛ քանի՛ հոգիներ կը հասնէին սրբութեանը, եթէ սկզբից եւեթ ճիշտ առաջնորդուէին:

149. Այո՛, գիտեմ, Աստուած ոչ մէկի կարիքը չունի իր գործերն ի կատար ածելու համար, բայց ինչպէս այգու տէրն է պարտիզպանին յանձնում հազուադիւս եւ մեծարժէք բոյսերի խնամքը, նոյնպէս եւ Յիսուս կամենում է՝ որ իրեն օգնենք հոգիների կրթութեան իր աստուածային արուեստի ասպարէզում:

Ի՞նչ կը պատահէր, եթէ մի անհանճար այգեպան լաւ չպատուաստէր իրեն յանձնուած տունկերը, եթէ չկարողանար տարբերակել նրանցից իւրաքանչիւրի տեսակը, եւ օրեր շարունակ տքնէր՝ դեղձենիի վրայ վարդեր ծաղկեցնելու մտադրութեամբ: Մահուան կ'առաջնորդէր ծառը, որը, սակայն, առողջ էր եւ կարող՝ պտղաբերելու:

Նմանօրինակ կերպով անհրաժեշտ է հասկանալ կարողանալը՝ թէ ինչ է պահանջում Աստուած տուեալ հոգուց, գործակցելով Նրա շնորհին, առանց այն արագացնելու կամ դանդաղեցնելու:

Ինչպէս թուչունները երգել են սովորում ունկնդրելով իրենց ծնողների ձայնը, այնպէս էլ մանուկներն են առաքինութիւնների գիտութիւնը՝ աստուածային սիրոյ վեհաշուք երգը սովորում այն անձերից, որոնք պարտական են կողմնորոշում տալու նրանց կեանքին: Յիշում եմ, որ թուչուններիս մէջ հիանալի դայլայլով գեղգեղող

<sup>1</sup> Աստուածաբանական առաքինութիւններ են կոչւում Հաւատքը, Յոյսը եւ Սէրը:

<sup>2</sup> Մտթ 18, 6

դեղձանիկ ունէի, եւ ունէի նաեւ մի կտաւաքաղ, որին էի շռայլում իմ մայրական խնամքները, քանի որ վանդակում էր ապրում բնից հազիւ դուրս ելնելուց սկսած: Այս խեղճ ու փոքրիկ բանտարկեալը ծնողներ չունէր, որոնցից կը կարողանար ուսանել մարդկանց ականջները շոյող երգարուեստը, բայց առաւօտից մինչեւ երեկոյ իր դեղձանիկ ընկերուհուն ունկնդրելով, որը դայլայլում էր զուարթօրէն, ուզեց նմանուել նրան: Սա դժուար առաջադրանք էր կտաւաքաղի համար. հետաքրքիր էր տեսնելը՝ թէ ինչպէս էր ջանում հասնել իր նպատակին, քանի որ իր թաւ ձայնը դժուարութեամբ էր համաձայնում երաժշտութեան ուսուցչուհու թրթռուն խաղերին: Եւ սակայն, տքնաջան աշխատանքը յաջողութեամբ պսակուեց ու իր երգը յարեւման դարձաւ դեղձանիկի երգին:

Ո՛վ Մայր իմ սիրելի, դուք էիք, որ սովորեցրիք ինձ երգել ... ձեր ձայնն էր, որ հմայեց ինձ մանկութիւնիցս ի վեր, եւ այժմ երջանկութիւնն ունեմ վստահութեամբ ասելու, որ նման եմ ձեզ: Գիտեմ՝ թէ որքան հեռու եմ ձեզնից, բայց յոյսն ունեմ, հակառակ իմ լիակատար տկարութեանը, որ յաւիտեան կրկնելու եմ ձեր երգը:

150. Կարմեղոս մտնելուցս առաջ, կեանքի ու աշխարհի խեղճութիւնների վերաբերեալ դեռ զանազան ա՛յլ փորձառութիւններ եւս ունեցայ, բայց այդ մանրամասնութիւնները ինձ նիւթիցս շատ հեռու կը տանեն. շտապեմ վերսկսել կոչմանս պատմութիւնը: Բէյէոյ գնալու համար որոշուեց Հոկտ. 31ը: Ճամփորդեցի միայն հայրիկի հետ, սիրտս լի էր յոյսով, ինչպէս նաեւ յուզմունքով, որովհետեւ շատ էի մտածում Եպիսկոպոսին ներկայանալու մասին: Կեանքումս առաջին անգամն էի այցելութեան գնում առանց քոյրերիս ընկերակցութեան, իսկ խօսքը վերաբերում էր Եպիսկոպոսին<sup>1</sup> այցելելուն: Ես, որ երբեք չէի խօսում առաջինը, այլ միայն պատասխանում էի ինձ ուղղուած հարցերին, ստիպուած էի ես ինքս բացատրել մեր այցելութեան նպատակը, լուսաբանել Կարմեղոս շուտով մտնելու կամքիս դրդապատճառները, մի խօսքով պէտք է ապացուցէի կոչմանս հաստատուն բնոյթը: Քանիցս ծանր էր այս այցելութիւնը: Երկչոտութիւնս յաղթահարելու համար՝ Սուրբ Հոգու յատուկ շնորհներից մէկի կարիքն ունէի: Բայց նաեւ ճիշտ է, որ «սիրոյ համար անհնարին բան չկայ, որովհետեւ ամէն բան հնարաւոր եւ արտօնուած է համարում իրեն»<sup>2</sup>: Եւ իրօք, Յիսուսի սէրն էր միայն, որ զօրացնում էր ինձ այդ եւ հետագայ միւս բոլոր դժուարութիւնների դէմ, որովհետեւ Նրան հաճելի եղաւ մեծամեծ փորձութիւններին համբերելու գնով վճարել տալ ինձ կոչմանս արժէքը:

Այժմ, երբ վայելում եմ Կարմեղոսի մենութիւնը («հանգստանալով Նրա հովանու ներքո՝ ում ձգտեցի հասնել այնքա՛ն եռանդով»<sup>3</sup>), թւում է՝ թէ երջանկութիւնս ստացել եմ ձրի, եւ եթէ դեռ չունենայի, այն ձեռքբերելու համար՝ պատրաստ կը լինէի կրելու է՛լ աւելի ծանր տուայտանքներ:

151. Երբ հասանք Բէյէոյ, հեղեղանման անձրեւ էր տեղում: Հայրիկը, որ չէր կամենում իր թագուհուն Եպիսկոպոսին ներկայացնել թրջուած զգեստներով, շտապեց ինձ եկեղեցի մտցնել: Եւ այնտեղ սկսուեցին վայերը: Գերյարգելի Ռէվէոնին<sup>4</sup>,

<sup>1</sup> Գերապայծառ Անթուան Աբէլ Յլաւիէն Հիւզոնէնը Բէյէոյի եւ Լիզէոյի եպիսկոպոսն էր 1867ից: Մահացաւ 1898ին, Մի Կեանքի Պատմութեան տպագրութիւնն արտօնելուց քիչ օրեր անց:

<sup>2</sup> Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, Ե 4

<sup>3</sup> Երգ 2, 3

<sup>4</sup> Գերյարգելի Ռէվէոնին թեմի Ընդհանրական Աթոռակալն էր 1879ից: Մահացաւ 1891ին, 55 տարեկան հասակում:

քահանաների մի մեծ խմբի ընկերակցութեամբ, յուղարկաւորման արարողութիւնն էր կատարում: Եկեղեցին լի էր սեւազգեստ տիկիներով, որոնք բոլորն էլ ինձ էին դիտում, իմ բաց գոյնի զգեստին եւ սպիտակ գլխարկին: Ուզում էի դուրս գալ եկեղեցուց, ինչը, սակայն, անհնարին էր, տեղացող անձրեւի պատճառով: Եւ ինձ դե՛ռ աւելի խոնարհեցնելու համար Աստուած թոյլատրեց, որ հայրիկը, իր նահապետական պարզութեան համաձայն, հարկադրի ինձ մինչեւ խորանի մօտ հասնել: Չուզելով տհաճութիւն պատճառել իրեն, առաջադրանքս կատարեցի կիրթ եւ վայելուչ ձեւերով, որոնցով էլ ցրուածութիւնն ապահովեցի Բէյէոյի ազնիւ բնակիչներին, որոնց կը նախընտրէի հանդիպած չլինել երբեք ... : Վերջիվերջոյ կարողացայ Աւագ Խորանի ետեւի մատուռը մտնել եւ ազատ շունչ քաշել: Կյնտեղ բաւական երկար մնացի ու շարունակ աղօթեցի, սպասելով անձրեւի դադարմանը, որպէսզի կարողանայինք դուրս գալ եկեղեցուց: Աղօթասրահով կրկին անցնելիս հայրիկը փորձում էր ուշադրութիւնս հրաւիրել ճարտարապետական գեղազարդերի վրայ. եկեղեցին աւելի ընդարձակ էր թւում այժմ, երբ դատարկ էր: Բայց ինչ վերաբերում է ինձ, միայն մի միտք էր տիրում հոգուս, որից դուրս ամէն բան անհամ էր իմ համար: Ուղղակի գերյարգելի Ռէվէոնիի մօտ գնացինք, որն արդէն տեղեակ էր մեր ժամանմանը, որովհետեւ հէնց ինքն էր որոշել այցելութեան օրը. բայց տեղում չէր: Ստիպուած էինք փողոցներում թափառել, որոնք ինձ բաւական տխուր էին թւում: Վերջապէս վերադարձանք Եպիսկոպոսարանի մօտ եւ հայրիկը դէպի հիւրանոց առաջնորդեց ինձ, ուր, սակայն, յատուկ պատուի չարժանացրի վարպետ խոհարարին: Խեղճ սիրելի հայրիկս մի անհաւատալի քնքշանքով էր վարում հետս, ասում էր՝ որ չպէտք էի շատ վշտանալ, որ Եպիսկոպոսը անպայման համաձայն էր լինելու:

152. Հանգստանալուց յետոյ կրկին վերադարձանք գերյարգելի Ռէվէոնիի մօտ: Նոյն պահին մի ուրիշ պարոն եւս ժամանեց, բայց Ընդհանրական Աթոռակալը մեծ յարգանքով նրան սպասելու հրաւիրեց եւ առաջին հերթին մեզ ընդունեց աշխատասենեակ (այդ խեղճ պարոնը ձանձրանալու բաւական ժամանակ ունեցաւ, քանի որ այցելութիւնը երկար տեւեց): Գերյարգելի Ռէվէոնին շատ ազնիւ գտնուեց, բայց կարծում եմ՝ որ մեր այցելութեան նպատակը նրան մեծ զարմանք պատճառեց: Ժպիտը դէմքին ինձ նայելուց եւ մի քանի հարցեր տալուց յետոյ, ասաց. «Կամենում եմ ձեզ գերապայծառ Եպիսկոպոսին ներկայացնել, ինչդրում եմ՝ հետեւէք ինձ»: Ապա աչքերիս մէջ արցունքներ նկատելով, աւելացրեց. «Ա՛ ... ադամանդներ եմ տեսնում ... պէտք չէ դրանք Գերապայծառին ցուցադրել»: Զանազան Եպիսկոպոսների դիմանկարներով զարդարուած բազմաքանակ լայնատարած սրահներով էինք անցնում, որոնց մէջ փոքրի՛կ փոքրի՛կ մըջիւնի տպաւորութիւնն էի թողնում եւ հարցնում ինքս ինձ՝ թէ ի՞նչ էի ասելու գերապայծառ Եպիսկոպոսին: Երկու քահանաների ընկերակցութեամբ նա քայլում էր պատկերասրահներից մէկում, տեսայ՝ թէ ինչպէս գերյարգելի Ռէվէոնին մօտեցաւ նրան, մի քանի խօսք ասաց, ապա երկուսով ուղղուեցին մեր կողմ: Մենք նախասրահում էինք սպասում. երեք հսկայ բազկաթոռներ չըջապատում էին վառարանը, ուր պար էր բռնել կենսուրախ կրակը: Նորին Գերազանցութեան ներս մտնելը տեսնելով, ես եւ հայրիկը ծունկի եկանք՝ նրա օրհնութիւնը ստանալու համար: Ապա Եպիսկոպոսն ինքը հրաւիրեց հայրիկին նստելու բազկաթոռներից մէկի վրայ, ինքը նստեց նրա դիմաց, իսկ գերյարգելի Ռէվէոնին ուզեց ինձ տրամադրել մէջտեղի բազկաթոռը. քաղաքավարութեամբ հրաժարուեցի, բայց նա պնդեց, ասելով՝ թէ պէտք է ցոյց տայի, որ գիտէի հնազանդուել: Իսկոյն նստեցի, բայց ամօթից կարմրելով, որովհետեւ գերյարգելին մի պարզ աթոռի վրայ տեղաւորուեց, մինչ ես ընկղմուել էի հոյակապ բազկաթոռի մէջ, ուր իմ նման դեռ ուրիշ չորս հոգի կարող էին հանգիստ կերպով բազմել (եւ աւելի հանգիստ՝ քան ես, որ բաւական հեռու էի ինձ այդպիսի վիճակում զգալուց): Յուսով

էի, որ հայրիկը կը սկսէր խօսել, բայց նա ինձ յանձնեց այցելութեան նպատակի պարզաբանման պաշտօնը: Այն կատարեցի ճարտասանական ուժերիս ներածի չափով: Նորին Մեծութիւնը, ճարտարախօսութիւնների վարժուած լինելով, ներկայացրածս պատճառաբանումներից շատ ազդուած չթուաց: Սրանց փոխարէն, Պարոն Մեծաւորի մի պարզ խօսքն աւելի օգտակար կը լինէր իմ համար: Բայց դժբախտաբար, այդ խօսքը չունէի: Իսկ նրա ընդդիմութիւնը ոչ մի կերպ ի նպաստ ինձ չէր հանդիսանում:

153. Գերապայծառ Եպիսկոպոսը հարցրեց՝ թէ վաղո՞ւց էի փափաքում կարմեղոս մտնել: «Ա՛հ, այո՛, Զերդ Վսեմութիւն, – պատասխանեցի ես, – շատ վաղուց»: «Տեսնենք, – ժպտալով վրայ բերեց գերյարգելի Ռէվէոռնին, – չէք կարող ասել, որ այդ կամքն ունէք տասնհինգ տարի ի վեր»: «Ճիշտ է, – նոյնպէս ժպտալով պատասխանեցի ես, – բայց շատ տարիներ հանելու հարկ չկայ այդ թուից, որովհետեւ միանձնուհի եմ կամեցել լինել մտքիս առաջին զարթնումից ի վեր<sup>1</sup>, եւ միշտ էլ կամեցել եմ կարմեղական ընտանիքին պատկանել, որովհետեւ գտնում էի՝ որ միայն այդ միաբանութիւնից ներս կը կարողանայի բաւարարել հոգուս բոլոր պահանջները»: Զգիտեմ, Մայր իմ, թէ նոյն այս խօսքերով պատասխանեցի կամ ոչ կարծում եմ, որ աւելի վատթար եղանակով եմ բացատրել մտքերս, բայց իմաստը սա էր:

Եպիսկոպոսը, կարծելով՝ թէ հաճոյք է պատճառում հայրիկին, ջանաց դեռ մի քանի տարիով յետաձգել մեր բաժանումը, բայց որքան ապշած մնաց եւ ինչպիսի բարի օրինակ առաւ տեսնելով, որ հայրիկը նոյնպէս իմ կողմն էր եւ բարեխօսում էր, որպէսզի դէպի կարմեղոսի լեռը կարողանայի ճախրել տասնհինգամեայ հասակում: Եւ այնուամենայնիւ, ամէն բան ապարդիւն անցաւ. Եպիսկոպոսն ասաց, որ վերջնական պատասխան տալուց առաջ կարիքն ունէր զրուցելու կարմեղոսի Մեծաւորի հետ: Դրանից աւելի սարսափելի բառ ես չէի կարող լսել, քանի որ շատ լաւ գիտէի Մեր Հօր բացասական դիրքորոշումը: Հետեւանքում, առանց գերյարգելի Ռէվէոռնիի յանձնարարութիւնը մտաբերելու, ոչ միայն ադամանդներ ցոյց տուի Եպիսկոպոսին, այլ նաեւ նուիրեցի, եւ որքա՛ն: Զգացի, որ նա նոյնպէս յուզուած էր. վիզս բռնելով, գլուխս իր ուսին յենեց եւ մի այնպիսի բարութեամբ փայփայեց, որով մինչ այդ – թերեւս – ոչ ոքի չէր մխիթարել: Ասաց, որ ամէն բան դեռ կորած չէր, որ շատ գոհ էր դէպի Հռոմ կատարուելիք ուխտագնացութեանը բերելիք իմ մասնակցութիւնից, որ այսպիսով կոչուծս աւելի պիտի ամրապնդուէր, որ լալու փոխարէն պէտք է մեծապէս ուրախ լինէի: Վերջում էլ աւելացրեց, որ յաջորդ շաբաթ այցելելու էր Լիզէոյ. ուրեմն, հնարաւորութիւն կ'ունենար տեսակցելու Սուրբ Յակոբ եկեղեցու մեծարգոյ ժողովրդապետի հետ, եւ որ պատասխանս կը կարողանայի ստանալ իտալիայում: Հասկացայ, որ պնդելն անօգուտ էր, ինչպէս նաեւ ասելիք այլեւս չունէի, քանի որ պերճախօսութեանս ամբողջ պաշարը սպառուել էր:

154. Եպիսկոպոսն ուղեկցեց մեզ մինչեւ պարտէզ. հայրիկը նրան շատ զուարճացրեց, պատմելով՝ թէ ինչպէս էի այդ առաւօտեան վարսերս դէպի վեր սանրել՝ աւելի մեծահասակ երեւալու մտադրութեամբ (սա երբեք չմոռացուեց, որովհետեւ մինչեւ այսօր իսկ Գերապայծառը չի խօսում իր «դստեր» մասին առանց վերջիչելու վարսերի պատմութիւնը): Գերյարգելի Ռէվէոռնին մեզ ընկերացաւ մինչեւ պարտէզի դռնակը, եւ հայրիկին ասաց, որ նմանօրինակ բան դեռ չէր տեսել. «Մի հայր, որ նոյնքան եռանդով փափաքի իր զաւակին Տիրոջը նուիրել, որքան զաւակն ինքն է կամենում նուիրել իրեն»:

<sup>1</sup> Երեք տարեկանից:

Հայրիկը նրանից զանազան բացատրութիւններ խնդրեց ուխտագնացութեան վերաբերեալ, նաեւ՝ թէ ինչպէս պէտք է հագնուէր Սրբազան Քահանայապետին ներկայանալու համար: Դեռ անքերիս առջեւ է, մինչ ետ է դառնում դէպի գերյարգելի Ռէվէոռնին, ասելով. «Բաւական լա՞ւ է այսպէս»: Ինչպէս նաեւ ասել էր նրան, որ եթէ ինքը չթոյլատրէր ինձ Կարմեղոս մտնել, ես այդ շնորհը կը խնդրէի Հոռմի Սրբազան Հօրից: Սիրելի թագաւորս շատ պարզունակ էր իր խօսքերի ու շարժումների մէջ, բայց նաեւ այնքա՛ն գեղեցիկ: Բնական վեհութիւն ունէր, որը պէտք է շատ հաճելի եղած լինէր Եպիսկոպոսին, որը վարժ էր ազնուական հիւրասրահների բոլոր կարգումները իմացող անձնաւորութիւններով շրջապատուելուն, բայց ո՛չ ընդունելու անձամբ Ֆրանսայի ու Նաւարրայի թագաւորին, իր փոքրիկ թագուհու հետ միասին:

155. Երբ փողոցում յայտնուեցի, արցունքներս վերսկսուեցին, բայց ոչ այնքան իմ թախիծի պատճառով, որքան սիրելի հայրիկիս անօգուտ ճամփորդութեան: Ինքը, որ տօն էր ուզում կազմակերպել, հեռագիր առաքելով Կարմեղոս, աւետելու համար Եպիսկոպոսի երջանիկ պատասխանը, մինչդեռ այժմ ստիպուած էր ձեռնունայն ետ վերադառնալու: Որքա՛ն վշտացած էի: Թւում էր ինձ՝ թէ ապագաս խորտակուել էր ցմիշտ. որքան աւելի էի մօտենում վախճանին, այնքան աւելի էին խճճում գործերը: Հոգիս ընկղմուած էր դառնութիւնների մէջ, բայց նաեւ մեծ խաղաղութեան, որովհետեւ միմիայն Աստծոյ կամքն էի փնտռում:

Հագիւ Լիզէոյ հասած, շտապեցի Կարմեղոս. մխիթարութիւն էի փնտռում, եւ այն ձեզնից ընդունեցի, Մայր իմ: Ա՛հ, երբեք չեմ մոռանայ՝ թէ որքան տառապեցիք իմ պատճառով: Եթէ չվախենայի դրանք պղծելուց, կ'օգտագործէի մատնութեան երեկոյեան Առաքեալներին ուղղուած Յիսուսի խօսքերը. «Դուք էիք, որ իմ հետ էիք բոլոր փորձութիւններիս ժամանակ»<sup>1</sup>: Քաղցրիկ քոյրերս ինձ այնքա՛ն հոգենորոգ մխիթարութիւններ պարգեւեցին:



<sup>1</sup> Ղկա 22, 28